Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը
Տարեկան գինն է 10 ռուբլի. կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ".
կամ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լեզւով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «Կենդրոնական գրավաճառանոցում»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ **10** ՌՈՒԲԼԻ, ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ **6** ՌՈՒԲԼԻ

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „АРЦАГАНКЪ" իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armenien „Ardzagang"

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով

Յունվարի 11-ին օրիորդ

ՄԱՐԻԱՄ ԹԱՅԻՐԵԱՆԻ

մահուան քառասունըորդ օրը, 12 ժամին Դիդուբէի եկեղեցում կըկատարուի հոգեհանգիստ, որոյ մասին հանգուցեալի ծնողները Աղէքսանդր Նիկիտիչ Թայիրեան և Իւլիա Միխայլօվնա Թայիրեան յայտնում են ազգականներին և ծանօթներին: (1—1)

Մեռնկացած ԵՍԱՅԻ ՍԱՓՐՈՆՈՎԻՉ ԻՕՍԵԼԵԱՆԻ գործերի վրայ նշանակուած հոգատար վարչութիւնը այսու յայտարարում է, որ 1898 թուի փետրվարի 9-ին առաւօտեան ժամը 10-ին, նա պիտի կատարէ Բաթումի հաշտարար դատարանի տան մէջ Իօսելեանի հողերից 30 կտորների հրապարակական վաճառումն: Վաճառուող հողի վրայից մաքրուած է անտառը և թփերը և բաժանուած է մասերի թէ յատակագծի և թէ իսկական հողի վրայ: Վաճառումը կըսկսուի 2 ռուբլիից իւրաքանչիւր քառակուսի սաժէնին: Մանրամասնութիւնները կարելի է իմանալ և յատակագիծը տեսնել 1) Բաթումում, կալուածների կառավարիչ Ա. Ա. Ծատուրեանի մօտ, 2) Թիֆլիզում երդուեալ հաւատարմատար Ի. Ս. Տէր-Ստեփանեանցի մօտ և 3) Բաքւում, մասնաւոր հաւատարմատար Գ. Մ. Լեբեդինսկու մօտ: (3—3)

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Անտրպրէզ Վ. Լ. ՖՕՐԿԱՏՏԻ
Կիւրակի յունվ. 11-ին
Օպերային արտիստների ընկերութ. կըներկայացնէ
„ԱԻԴԱ"
Օպերա 5 գործող., երաժշտ. Վերդիի:
Մասնակցողներ՝ — Տիկնայք՝ Ձարէյսկոր, Կարամզինա-Ծուկովսկայա, պ. պ. Պերեօ, Վինօգրադով, Գօրեայինով, Գագաէնկօ և այլք:
Պարերը կըղեկավարէ պ. Զօվասի, մասնակցութեամբ օր. Լինչեվսկու.
Երաժշտապետ Ի. Գ. Պագանի
Ռէժիսօր Իվ. Ե. Փիթոյեվ:
ՍԿԻԶԲՆ Է 8 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ
ԱԶԴ.—Վաղը ի նպաստ տիկ. Կօկինիս-Կօնստանտինովայի կըտրուի «Լուչիա» օպերան: Յունվարի 16-ին ի նպաստ տ. Կարենինա-Դինկուլովայի կըներկայացնեն «Սնեգուրօչկա» օպերան և «Հէնզէլ և Գրետէլ» օպերայի երկրորդ գործողութիւնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեհափ. Հայրապետը ջրօրհնեաց հանդիսին:
«Արձագանքը» և պ. Վելիչկօն:
Մոսկ. կատալօնցու վրէժխնդրութիւնը:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Շնորհաւորութիւններ Վեհափառին: Բարձրագոյն շնորհումներ: Վեհ. Հայրապետի այցելութիւնն Ներս. դպրանոց. Յիշատակագիր Կ. Պօլսի դեսպաններին: Հերակլ II-ի մահուան 100 ամեակը: Մոսկուայի կայս. հնագիտական ընկեր նիստը: Շամախու առաջնորդի մահը: Չարջույ-Սամարղանդի երկաթուղին: Մեր թեմ. իշխան. պատկերներից փոքրագոյնը: Երկ. Բորժոմիցի Բակուրեան գիւղը: Նամակ Մոսկուայից: Նամակ Սիմֆերօպոլից: «Էմմա» վէպի առանձին գրքով հրատարակութիւնը: Յունվարի 7-ի հայկ. ներկայացումը: Բաքուից: Կանանց թոյլտուութիւն դեղավաճառական պրովիզօրութեան: Բարեգ. ընկ. երեկոյթի հաշիւը: Միքայէլ Գ. Տ. Մկրտչեանի ծանր հիւանդութիւնը: Ամբոխը: Քաղաքում դէպքեր:
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ԴԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Տրապիզոնից: Քաղուածքներ Պօլսոյ լրագրներից:
ՖԵԼԻԵՏՕՆ.—Երէկ և այսօր:
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՋՐՕՐՀՆԵԱՑ ՀԱՆԴԻՍԻՆ

Վաղուց Թիֆլիսի հայ հասարակութիւնը մի այնպիսի հոգեկան բարձր մխիթարութիւն չէր զգացել, ինչպէս այս տարի յունուարի 6-ին: Այդ օրը Ջրօրհնեաց հանդիսին ներկայ էր ազգիս Վեհափառ Հայրապետը: Արդէն կանուխ առաւօտեանից հոծ բազմութիւն լցուել էր Վանաց տաճարը, ընդարձակ գաւիթը, մօտակայ փողոցները, սկսած Վանքի դարբասից մինչև Յորդանանի կամուրջը որը կառուցուած էր Մուխրանեան փողոցից. ժամը 12-ին բազմութիւնը մի քանի տասնեակ հազարներ էր կազմում և բռնել էր Քուռ գետի երկու եզերքը և կղզին: Պատարագիչն էր Թեմիս առաջնորդ բարձր սրբազան Գէորգ արքեպիսկոպոսը: Ժամը 11½ին եկեղեցական թափօրը բարձր սրբազան Գէորգ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ և ուղեկցութեամբ դրօշակների համբարների և խուռն բազմութեան շարժուեց. Թափօրին հետեւում էր Նորին Օծութիւն ազգիս Վեհափառ Հայրապետը, հետն ունենալով Երուսաղէմի ամենապատիւ պատրիարքի ներկայացուցիչ բարձրապատիւ հայր Գէորգ Երիցեանին, գաւազանակիր Կորիւն և ս. Սարգիս եկեղեցւոյ վանահայր Առիւծեան վարդապետներին: Վեհափառ Հայրապետի առաջև տանում էին Կաթուղիկոսական քողը: Խաչը ջուրը ձգելուն պէս, հարիւրաւոր ատրճանակներ պայթեցան ըստ վաղեմի սովորութեան և տասնաւոր երիտասարդներ կատարելապէս մերկացած ընկան ջուրը լողանալու նպատակով: Թափօրի վերադարձին հազարաւոր ամբոխի անընդհատ կոչումները «կեցցէ Վեհափառ Հայրիկ» չէին դադարում մինչև Վեհի վեհարան բարձրանալը: Չնայած արտաքոյ կարգի բազմութեան, կարգապահութիւնը օրինակելի էր:

Վեհարանում այդ միջոցին արդէն ժողովուել էին քաղաքիս հայ հասարակութեան ընտիր ներկայացուցիչները. այստեղ էին՝ մամուլի ներկայացուցիչները, քաղաքային վարչութեան իրաւասուները, Բարեգործական Ընկերութեան և նոյն ընկերութեան ընդհանուր ժողովների նախագահները, Կայսերական դրան սենեկապետ Նիկոլ. Արղութեան-Երկայնաբազուկ իշխանը, մեր ծերունազարդ Գ. Սունդուկեանցը, սեղանաւորներ, հայ պաշտօնեաներ և արհեստաւորաց ներկայացուցիչները, որոնք եկել էին ազգիս Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը առնելու: Վեհարանում Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեամբ ճոխ սեղան էր պատրաստուած: Նորին Օծութիւնը դիմելով ժողովականներին ասաց՝

«Շնորհաւոր ծնունդ և մկրտութիւն. ահա երկրորդ անգամն է որ երջանիկ եմ ձեզ հետ լինել և մասնակցել այդ սուրբ հանդիսին. շատ ուրախ կըլինիմ եթէ երրորդ ու չորրորդ անգամ ևս արժանանամ այդ նուիրական տօնի օրը ձեզ հետ լինել, բայց եթէ նախախնամութիւնը չարժանացրեց, մնաս չունի: Գոհ եմ և ուրախ, կըտեսնեմ ձեր ջերմեռանդութիւն, եկեղեցասիրութիւն. կըհաւատամ որ ինձ ալ քիչ մը կըսիրէք և կըյարգէք, իսկ ես աւելի կըհրճուիմ մեր ժողովրդի պարզասրտութենից. հարիւրաւոր մարդիկ ցուրտ ջրի մէջ կըլողային, մի քանի պանդուխտ Հայաստանցի մշակներ տախտակապատի տակն էին մտեր, ես Միւռօն կըթափէի, անոնք ալ բուռներով կըհաւաքէին. բոլոր միւռօնը նրանք տարան. բայց հոգ չէ, անոնք ալ պանդուխտներ են գրանով կըմխիթարուին. Գէորգ Սրբազան, գիտեմ այդ ժողովուրդ միշտ կըզգան քեզ շնորհաւորելու. ուրախ եմ... կըցաւեմ որ եկեղեցում բազմութեան ներկայութեամբ անկարող եղայ մի քանի խօսք ասելու, օրհնել Երմալեան յոգնեցրուց մեզ. կըմտածէի թէ պատարագն չի պիտի վերջանայ. շիտակն ըսեմ, ձեր եկեղեցին ալ բնաւ քարոզ խօսելու յարմարութիւն չունէ. փոքր, նեղ, անշուք. ատոր համար Պօլսոյ եկեղեցիներ աղեկ են. մեծ, ընդարձակ: Անիթ կըքաղեմ դէպքից և կասեմ. յարգեցէք ձեր նուիրական կրօն և առաւելապէս սիրէք ձեր սուրբ եկեղեցին: Զուարճացէք. Գէորգ սրբազան, հիւրերին լաւ ընդունիր, բայց ես այսօրուան ծախքերից չեմ մասնակցիր, ես փարայ չունիմ...:

Թեմիս սրբազան առաջնորդը ժողովականներին սեղանի հրաւիրելով և բաժակ առնելով, առաջարկեց Նորին Մեծութիւն Օգոստափառ կայսեր և Նորին Օծութեան Ազգիս Վեհափառ Հայրապետի կենաց արևշատութեամբ, որոնք ընդունուեցան կեցցէներով. այնուհետև առաջարկուեցան երկրիս կառավարչապետ Իշխան Գօլիցինի, համազգային Նախամեծար մայր աթոռիս հաստատութեան և Թեմիս առաջնորդ բարձր Սրբազան Գէորգ Արքեպիսկոպոսի կենացները:

Վեհափառ Հայրապետը որ սկզբից արդէն առանձնացել էր իւր սենեակը, նախաճաշի ժամանակ մի քանի անգամ դահլիճ ելաւ և իւրեն Օծութեան յատուկ ոճով օրհնեց ժողովրդին և հոգևորականութիւնը, որը ձգտում է իրագործել Յիսուսի Քրիստոսի պատուէրը՝ զանձն իւր դնել եղբարց ոչխարաց: Նորին Օծութիւնը չափազանց ուրախ էր և զուարթ և վերջն էլ մի բաժակ առնելով ասաց՝

Սրանից տարիներ առաջ 60 ական թուականներին երբ առաջին անգամ Թիֆլիզ եկայ, կենցաղավարական պայմանները խիստ կըտարբերուէին այժմեանից. մարդիկ աւելի պարզ կապրէին, թէև զուարճութիւն սեղան տեղի կունենային: Ես ինքս շատ անգամ մասնակցել եմ դրանց ընկերական խնճոյքներին—կենացների թիւը սահման չունէր. երբեմն նոյն իսկ աւազակաց կենաց կառաջարկէին. կերևի թէ այն ժամանակ աւազակութիւնը իբրև քաջութիւն կարտայայտուէր: Ես ալ մի կենաց կուզեմ առաջարկել. նայեցէք ձեր սեղանին—ամենայն բարիք ձեր առաջն է, հաց, պուղ, գինի, պանիր, պէսպէս ուտելիքներ. ատոնք բոլորն էլ դաշտային ժողովրդի աշխատանաց արդիւնքն է. անոնք կըպատրաստեն. այգիներ, պարտէզներ, դաշտեր կըմշակեն, անձրևի, կիզիչ արևի տակ և մենք կըվայելենք. կառաջարկեմ դաշտային հայ ժողովրդի կենաց. կասեմ դաշտային հայ ժողովուրդ որ կապ է Կովկաս և Տաճկաստան. Գէորգ սրբազան, դու էլ վայելէ, ինձ նայիր, ես ալ դաշտային ժողովրդի զաւակ եմ, կըսիրեմ, կըյարգեմ նրան. երբէք չեմ մոռանայ, միշտ կըյիշեմ, օհնեալ լինիք...

Ժողովականները առնելով Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը և խորին երախտագիտութիւն արտայայտելով Թեմիս առաջնորդ Գէորգ Սրբազան արքեպիսկոպոսին, հեռացան վեհարանից քաղցր, անմոռաց յիշատակներ տանելով իրանց հետ:

«ԱՐՁԱԳԱՆՔԸ» ԵՒ Պ. ՎԵԼԻՉԿՕՆ

Je prends mon bien où je le trouve.
Molière.

«Կավկազի» խմբագիր պ. Վելիչկօն, հարուստ նիւթ գտնելով իւր հայակերական ախորժակների համար «Մշակում», միշտ առանձին սիրով ընդգծում է այդ թերթից կատարած իր քաղուածքները: «Մշակն ասում է», «Մշակին հաղորդում են», «Մշակի մէջ կարդում ենք», «Մշակն իրաւամբ նկատում է» և այլն. իսկ անցեալ տարուայ վերջին Կովկասեան մամուլի այդ երկուորեակները սրտաշարժ կերպով գրկախառնուեցին և «Կավկազի» հայատեաց ճակատը զարդարուեցաւ «Մշակի» յայտարարութեամբ և vice versa! Բայց պ. Վելիչկօն միմիայն այդ թերթով չէ բաւականանում. Նա երբեմն վեհանձնաբար վեր է առնում լուրեր նաև միւս հայ թերթերից, միշտ իրան ոչ-յատուկ բարեխղճութեամբ յիշելով նրանց անունները:

Մի հայ լրագիր կայ սակայն, որի անունը ոչ միայն գրել, այլ մինչև իսկ լսել չէ կարող քաջամարտիկ ասպետը. մի լրագիր, որի խմբագրին «սաղ-սաղ կուլ կըտար» այդ կուլտուրական հրապարակախօսը, եթէ երկիւղ չկրէր խեղդամահ լինելուց. մի լրագիր կայ, որ ոչ մի ժամանակ, ոչ մի պայմանով և ոչ մի դէպքում արձագանք չի տալ Վելիչկօներին, այլ միշտ ցոյց կըտայ իւր ատամները,—այդ թերթը «Արձագանքն» է: Եւ ահա այստեղ մի դիլեմա է ներկայանում պ. Վելիչկօյին. մի կողմից դժբաղդաբար «Արձագանքում» պատահում են կարի հետաքրքրական յօդուածներ, իսկ միւս կողմից, պ. Վելիչկօն, որ երրորդական բանաստեղծից, մէջից ճեղքուելով, անպատճառ առաջնակարգ «օկրային» հրապարակախօս է կամենում դառնալ, քաջ հասկանում է, որ միմիայն իւր հայընտակերական (?!) առաջնորդողներով և «ա՛ կեղծ (?!!) ճառերով» չի արժանանալ ոչ «Նովոյե Վրեմիայի» և ոչ «Մոսկով. Վեդ.» ուշադրութեան, որոնք այդ բանի մէջ «իրանք էլ չուտ են կերեր». Նա գիտէ որ թերթը հետաքրքրական դարձնելու համար անհրաժեշտ է տեղական առաջնակարգ աղբիւրների դիմել:

Արդ, ինչ միջոց գտնել «Արձագանքից» հետաքրքրական տեղեկութիւններ, յօդուածներ քաղելու, առանց նրա անունը յիշելու: Անկասկած մի շատ դժուարին գործ է դա ամէն մի շատ թէ քիչ բարեխիղճ հրապարակախօսի, բայց ոչ պ. Վելիչկօյի համար:

Պ. Վելիչկօն գտել է այդ միջոցը եղակին... յոգնակի դարձնելով: Երբ «Կավկազը» «Արձագանքից» մի լուր, տեղեկութիւն կամ յօդուած է քաղում, նա գրում է. «Հայոց լրագիրները ասում են» «Հայկական թերթերում կարդում ենք» «Հայկական լրագիրները հաղորդում են», թէև այդ «ասածը», «կարդացածը», «հաղորդածը» ոչ մի այլ հայկական լրագիր բացի «Արձագանքից» ոչ ասել է, ոչ հաղորդել, ոչ տպագրել: Այսպիսով «Կավկազը» հակառակ իւր ցանկութեան, ակամայ խոստովանվում է որ «Արձագանքը» հայկական լրագիր է par excellence և այն ինչ որ «Արձագանքն» է ասում, պէտք է և ուրիշ լրագիրները ասեն: Այս լռելեայն գնահատումը նրա համար աւելի դիւրին է, քան իր քունը կոտրող լրագրի անունն յիշելը:

Այսպէս, իր յունուարի 9-ի համարում պ. Վելիչկօն մի ընդարձակ քաղուածք է արել պ. Երիցեանի «Արձագանքի» անցեալ համարում լոյս տեսած յօդուածից հանգուցեալ կոմս Դելեանեանցի տոհմական ծագման մասին, գրելով „Въ армянскихъ газетахъ находимъ нѣкоторые данные родословной и. т. д. (Հայկական լրագիրներում գտնում ենք և այլն) առանց մի խօսքով եթէ ոչ «Արձագանքի», գէթ պ. Երիցեանի անունը յիշելու:

ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱՏԱԼՕՆՑՈՒ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ

Դեկտեմբերի 14-ին Մոսկվայի հայ ուսանողների սարքած երեկոյթը՝ ազնուականաց ակմբի դահլիճներում, զուտ արդիւնք է տուել 2000 ռ.: Սակայն խօսքը ոչ այս արդիւնքի մասին է և ոչ երեկոյթի մանրամասնութեանց մասին, որոնք յայտնի են ընթերցողներին, այլ այն, որ այս անգամ հայ ուսանողները իրանց երգեցիկ խումբը կառավարելու համար հրաւիրել էին պ. Իպպոլիտով—Իվանօվին և ոչ թէ պ. Կոռեշչենկոյին: Եւ ահա վերջինս իրան անարգուած համարելով ուսանողներից, հանդէս է գալիս «Մոսկով. Վեդոմոստի» լրագրում, ուր զետեղում է մի յօդուած ուղղած հայոց դէմ: Այդ անիմաստ յօդուածում կրքից կուրացած Կոռեշչենկօն ճգնում է ապացուցանել, թէ հայերը չունին իրանց յատուկ երգերը ազգային եղանակներով և թէ եղածներն էլ փոխառուած են պարսիկներից, տաճիկներից և վրացիներից: Իւր ազիտութիւնը փառաւորապէս պսակելու համար, թէյավաճառ Կոռեշչենկօն (Корещенко-чайная Торговля, Кузнецкій Мость д. Захарьина) յանդգնում է դեկ 22-ին Մոսկվայի պօլիտեխնիքական թանգարանում մի զեկուցումն կարդալ նոյն առթիւ և ասում է, թէ ինքն Վրաստանում ուսումնասիրել է (?!) հայոց եղանակները և հասել է այն եզրակացութեան, թէ հայերը իբր թէ երգեր, ազգային եղանակներով չունին: Ինչու... որովհետև, հայերը թագաւորութիւն չունին! Դրան ջերմաջերմ պատասխանում է պ. Գր. Խալաթեանցը. բայց յամառ ընֆերենտը իւր կողմից այսքան է միայն ասում «ես ձեզ լսում եմ քաղաքավարութիւնից միայն»: Պրոֆ. Կորշը (Ө. Ч. Коршъ) նկատում է, թէ վրացիք էլ թագաւորութիւն չունին, այն ինչ հայոց և վրաց ազգերը գոյութիւն ունին, ապա ուրեմն, երգեր ու եղանակներ էլ ունին: Յարգելի պրոֆեսորը աւելի քան միակողմանի է գտնում պ. ընֆերենտի եզրակացութիւնները. եթէ պարոնը կամենում էր ուսումնասիրել հայոց երգերի եղանակները, նա պիտի գնար բուն Հայաստան, օրինակի համար Մուշ, Վան և այլ կողմեր: (Պ. Կորեաշենկոյի կարծիքով, եթէ մի մարդ կամենար ուսումնասիրել ֆրանսիական երգերը, նա պարտական էր ճանապարհորդել դէպի Մադագասկար կղզին, կամ գնար Տօնկին. ռֆերեմ.): Լազարեան ճեմարանի վերատեսուչ պրոֆ. Միլլերը, որ նախագահում էր այդ նստին, կամենալով խափանել ըժ. ընֆերենտի յամառութիւնը, իւր կողմից նկատում է, «թէ շատ անգամ մարդս, մանաւանդ գիտնականներս մի որոշեալ բանի կամ առարկայի մասին ունինք այս կամ այն կարծիքը, որ երբեմն թերի է լինում, բայց երբ, ժամանակաւ, աւելի մօտենում ենք այդ առարկային, ուշի ուշով ուսումնասիրում ենք զորան զանազան կողմից, հարկաւ փոխում ենք առաջին կարծիքը. նոյն երևոյթը կարող է ձեզ հետ էլ պատահել, եթէ դուք մի օր ճանապարհորդելու լինիք Հայաստանում, բուն տեղումը ուսումնասիրելու համար հայկական երգերը»:

Հասկացաւ արդեօք պ. Կոռեշչենկոն, թէ գիտնական կաճառները «Մոսկ. Վեդոմոստ» լրագիրը չեն, ուր ամենայն անսակ լուտանք կարելի է թափել, ում գլխին կուզես:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յունվարի 6-ին Ծննդեան եւ Մկրտութեան տօնի առիթով բազմաթիւ անձինք աշխարհական և հոգևորականներ հեռագրով իրանց շնորհաւորանքներն էին ուղարկել Վեհափառ Հայրապետին և իրանց որդիական խոնարհ յարգանքներն էին մատուցել առ ոտս Նորին Օծութեան:

* *
*

Թագաւոր Կայսրը սոյն յունվարի 1-ին Ամենաողորմածաբար բարեհաճել է շնորհել

Ս. Աննա շքանշանի երկրորդ աստիճանը Երևանի գաւառի հարկային տեսուչ—Կարապետ Կամսարականին և Գանձակի գաւառի հաշտարար դատաւոր—Նիկողայոս Մելիքեանին:

Ս. Ստանիսլավ շքանշանի երկրորդ աստիճանը Եկատերինոդարի նահանգական դատարանի անդամ—Սեղրակ Դադեանին, Շարուր-Դարալագեազի գաւառապետ—Կոստանդին Առաքելեանին և Վլադիկավկազի օրիորդաց գիմնազիոնի ուսուցիչ—Հրաչեայ Տէր-Բարսեղեանին:

Ս. Աննա շքանշանի երրորդ աստիճանը Կայսր Աղէքսանդր II-ի Թիֆլիզի մանկական ապաստանարանի հոգաբարձուօգնական—Գէորգ Թամամշեանին, Թիֆլիզի նահանգական պալատի աւագ երկրաչափ—Յակովբ Սարգսեանին, Ղզլարի քաղաքային դըպրոցի տեսուչ-ուսուցիչ—Ստեփաննոս Թամազեանին, Շուշուայ ըէալական դըպրոցի ուսուցիչ—Գրիգոր Յովհաննիսեանին և նոյն դըպրոցի վերակացու-Յովսէփ Թարումեանին:

Ս. Ստանիսլավի շքանշանի երրորդ աստիճանը Շուշուայ ըէալական դըպրոցի պատուաւոր հոգաբարձու—Աղէքսանդր Մելիք-Ազարեանին, Թիֆլիզի երրորդ գիմնազիայի բժիշկ — Աղէքսանդր Մամինեանին, Ստավրոպոլի գիմնազիայի ուսուցիչ—Գրիգոր Սարգիսեանին:

—

Թագաւոր Կայսրը Ամենաողորմածաբար բարեհաճեց, համաձայն ելեմտից նախարարի վկայութեան, հայրենի առևտրի և արդիւնաբերութեան ասպարիզում ցոյց տըւած օգտաւէտ գործունէութեան համար, սոյն յունվարի 1-ին շնորհել Բագուայ առաջին կարգի վաճառական —Պօղոս Ղուկասեանին առևտրական խորհրդականի (կոմերցիի սովետնիկ) աստիճանը:

—

Թագաւոր Կայսրը, համաձայն ներկայացման ելեմտից նախարարի, Ամենաողորմածաբար բարեհաճել է շնորհել սոյն յունուարի 1-ին, Ոսկեայ մեդալներ վասըն եռանդի մակագրութեամբ պարանոցի վրայ կրելու՝

Անդրէասեան ժապաւէնով — նահանգական հարկային ատենի անդամ, ատեմական պատուաւոր քաղաքացի, իրաւաբանութեան կանդիդատ Միքայել Թամամշեանին:

Ս. Ստանիսլաւի ժապաւէնով — Թէոդոսիայի տոհմական պատուաւոր քաղաքացի Աղէքսանդր Ալթունջիին, Հաշտարխանի երկրորդ կարգի վաճառական Սարգիս Ալաջալեանին և Ղարասուբազարի 2-րդ կարգի վաճառական Դանիէլ Եաղուբեանին:

Արծաթեայ մեդալ պարանոցի վրայ կրելու Ս. Ստանիսլաւի ժապաւենով Նախիջևան քաղաքի առևտրական պատգամաւորութեան անդամ Ստեփան Գասպարեանցին:

Ոսկեայ մեդալ կուրծքի վրայ կրելու Ս. Աննայի ժապաւենով Գանձակի գաւառային հարկային անդամ Մուղդուսի Սիմէօն Աւալեանցին:

* * *

Վեհափառ Կաթողիկոսը երէկ ամսիս 10-ին ցերեկուայ 11 ժամին բարեհաճեց այցելել Ներսիսեան ազգ. հոգևոր դպրանոցը:

Դպրանոցի ճակատը զարդարուած էր դրօշակներով և բակի դռնից մինչև ներսի մեծ դահլիճը կարմիր մահուդ փռուած. դահլիճում սպասում էին դպրանոցի հոգաբարձուք և յար. ուսուցիչները: Վեհին դիմաւորեց պ. տեսուչ Բալաղեան բակի մուտքի մօտ: Վեհին ուղեկցում էին թեմիս առաջնորդ սրբազանը, Երուսաղէմի բաբէչնորհ Գէորգ վարդապետ Այվազեանը, և Վեհի դիւանադպիր Կոբեան հայր սուրբը: Դահլիճում էին դպրանոցի բարձր դասարանի աշակերտները: Երգեցիկ խումբը պ. Եկմալեանցի ղեկավարութեամբ երգեց մի քանի հոգևոր և ազգային երգեր: Հոգաբարձութիւնը իւր մի անդամի միջոցով Վեհափառին ներկայացրեց դպրանոցի ապագայ շէնքի պլանը, իսկ պ. տեսուչը կարդաց դպրոցի մասին մի համառօտ տեղեկագիր: Վեհափառը խօսեց կրթութեան մասին. յորդորեց ուսուցիչներին, դաստիարակներին, որ աշխատեն սիրել տալ գիւղացի տղաներին գիւղը, գաւառը, որ նրանք ընթացաւարտ լինելուց յետոյ դառնան դէպի իրանց ծննդավայրերը, դէպի արօրն ու մաճը, ժառանգորդ դառնան հայրական պարապմունքներին՝ կատարելագործուած միջոցներով:

Պ. տեսչի առաջնորդութեամբ Նորին Վեհափառութիւնը դասարանները դիտելուց յետոյ, օրհնեց ամենին ու գնաց տեսնելու դպրանոցի ապագայ շինութեան համար աչքի առաջ ունեցած երկու տեղերը:

* * *

Կ. Պօլսոյ բոլոր դեսպանները մի յիշատակագիր են տուել, ուր նկարագրվում է հայկական նահանգներում տիրապետող աղքատութիւնը և խնդիր արտայայտվում որ ռէֆօրմներ հաստատուին Տաճկական Հայաստանում:

* * *

Այսօր յունուարի 11-ին, Սիոնի եկեղեցում վրաց նախավերջին Թագաւոր Հերակլ II-ի մահուան հարիւրամեակի առիթով հոգեհանգիստ կկատարուի:

* * *

Յունուարի 4-ին, երեկոյեան 7½ ժամին, ինչպէս հաղորդում է «Ռուսկ. Վեդ.» լրագիրը, կայացաւ Մոսկուայի Կայսերական Հնագիտական ընկերութեան նիստը, որից առաջ նշանակուած էր ընկերութեան նասի յայտարարութեան մէջ, պէտք է ընկերութեան պատուաւոր անդամ Կոմս Դելեանեանցի և իսկական անդամ Պավլինովի հոգեհանգիստը կատարուէր: Բայց ինչպէս յայտնեց ատենապետուհի Կոմսուհի Ուվարօվան, տեղական հոգևորականութիւնը հրաժարուել է Կոմս Դելեանեանցի հոգեհանգիստը կատարել, վասն զի տեղական յաջորդ սրբազան Նեստորը մերժել է թոյլատուութիւնը: Կոմսուհի Ուվարօվան բանալով նիստը, հանգուցեալ կոմսին նուիրած իր փոքրիկ ճառի մէջ, ցաւ յայտնեց, որ ընկերութեան ցանկութիւնը ներկայ դէպքում արդելքի է հանդիպել, մինչդեռ հանգուցեալ կոմս Դելեանեանցի հոգեհանգիստներ կատարուել են թէ Պետերբուրգում, թէ Մոսկուայում (համալսարանում և այլ դպրոցական հաստատութեանց մէջ) և թէ գաւառներում:

* * *

Յունվարի 4-ին Շամախում յանկարծակի վախճանուել է Շամախու Թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Այվազեանը:

* * *

Որոշուած է Չարջույ Սամարղանդի երկաթուղու գիծը, որ մինչև այժմ գտնվում էր զինուորական նախարարութեան տեսչութեան ներքոյ, յանձնել ճանապարհների հաղորդակցութեանց նախարարութեան:

* * *

Այս գարնանը կըձեռնարկուի երկաթուղու մի գծի կառուցման Բօրժօմի կայարանից մինչև Բակուրեան գիւղը:

* * *

ՄՈՍԿՎԱ յունվ. 3.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Լազարեան ճեմարանի պ. վերատեսուչը հրաւիրել է երիտասարդ մագիստրոս Լ. Մսերեանցին՝ համեմատական լեզուագիտութեան դասախօսութիւններ կարդալ մասնագիտական լսարաններում ցանկացողների համար: Իսկ նոր տարու սկզբում պ. Նիկոլսկին, բևեռագիր արձանագրութեանց վերծանողը, ճեմարանիս նոյն լսարաններում սկսելու է Եբրայեցւոց լեզուի դասաւանդութիւնը:

Եթէ չենք սխալվում, Գէորգեան ճեմարանի ծրագրի մէջն էլ յիշուած է Եբրայեցւոց լեզուի դասաւանդութիւնը, սակայն մինչև այժմ այդ լեզուն չէ աւանդվում Ս. Էջմիածնի Ակադեմիայում:

Ռոմանովի տանը տեղի ունեցաւ մի հայկական ներկայացումն բարեգործ ծախսն նպատակով. եր կոյթ սարքողները էին Մամիկոնեան ամուսինները: Խաղացին Քիշմիշեանցի «Օրիորդ Բերոյեանց» պիեսը: Ներկայացումն, ընդհանրապէս, լաւ անցաւ. մանաւանդ աչքի էին ընկնում տիկին Եդ. Մամիկոնեանը (օր. Բերոյեանց) և պ. Ջմշկեանը, որ իւր դերը Թիֆլիզի բարբառով կատարեց: Ներկայացումից ստացուած արդիւնքը մօտաւորապէս 500 ռուբլի է: Ներկայացումից յետոյ սկսուեցաւ պարահանդէսը, որ տևեց մինչև 3 ժամը:

Դեկ. 31-ին Լազարեան ճեմարանում հանգ. կոմս. Դելեանեանի յիշատակին հոգեհանգիստ կատարուեցաւ ի ներկայութեան պ. դիրեկտորի, տեսչի, ուսուցիչների և աշակերտների: Կոմսը, ինչպէս յայտնի է, պերճ Լազարեանց տոհմի մերձաւոր ազգականներիցն էր և աւարտել է իւր ուսման ընթացքը Լազարեան ճեմարանում:

* * *

ՍԻՄՖԵՐՈՊՕԼ, յունվ. 4.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Գերապատիւ Խորէն եպիսկոպոս Ստեփանէն նոր տարի օրը օծեց տեղիս վերանորոգուած ս. Վերափոխման եկեղեցին: Այդ օրը եկեղեցում բառիս բուն նշանակութեամբ ասեղ գցելու տեղ չը կար: Պատարագիչը ինքը հայր սրբազանն էր. նա այդ օրը իրան յատուկ աշխոյժով ու ոգևորութեամբ քարոզ խօսեց, բացատրեց եկեղեցւոյ օծման նշանակութիւնը և ասաց. «Իւրաքանչիւրս իւր մէջ ունի այդ տաճարը,—դա սիրտն ու հոգին է, որ աւերուած եկեղեցու նման վերաշինութեան և օծման է կարօտում: Ինչպէս որ սոյն եկեղեցին վերաշինուելով ու օծուելով սրբացաւ, այնպէս էլ հարկաւոր է, որ մենք վերաշինենք մեր հոգւոյ տաճարը և սրբացնենք այն: Սոյն վերաշինուած եկեղեցին օծեց ինձ պէս մի մահկանացու հոգևորականը, իսկ մեր հոգիկան տաճարները—մեր սիրտն ու հոգին կ'օծի Երկնաւոր Մեծ Ճարտարապետը: Բարեխօսութեամբ եմ առ Աստուած, աղօթքներ վեր առաքում առ Նա, որ այս օրուանից սկսուի մեր հոգւու տաճարների շինութիւնը»:

Եկեղեցւոյ օծման ծէսը խիստ երկարելու պատճառով, այդ օրը անյարմար էր օծման հանդէսը տօնել, ուստի և գեր. հայր Ստեփանէն փոխադրելով իւր քարոզը՝ յայտնեց իւր ժողովրդին, թէ օծման հանդէսը տօնուելու է կիւրակի, յունվարի 4-ին, ս. պատարագից յետոյ, դպրոցի դահլիճում, որտեղ սեղան պատրաստած կլինի, ցանկացողը կարող է մասնակցել լինելիք ճաշկերոյթին, որին հրաւիրուելու են նաև պատուաւոր հիւրեր:

Այսօր ս. պատարագից յետոյ, տեղիս հայ հասարակութեան պատուաւոր անձինք, թւով մօտ 30 հոգի, գնացին հայոց դպրոցի դահլիճը, որտեղ սեղան էր պատրաստուած տեղի ունեցած օծման հանդէսի առիթով: Հրաւիրուած պատուաւոր հիւրերից ներկայ էին տեղիս քաղաքագլուխը, ոստիկանապետը, «Կրիմ» լրագրի խմբագիր Բալաբուխան, ռուսաց ժողովրդական դպրոցների տեսուչը: Առաջին բաժակն առաջարկեց գերապ. հայր Ստեփանէն Թագաւոր Կայսեր կենացը, որպիսի առաջարկութիւնը ընդունուեց յարգանք երկարատև «ուռա» աղաղակներով: Յետոյ տեղիս քաղաքագլուխն առաջարկեց մեր հոգևորականութեան պետի—Նորին Վեհափառութեան կենացը, որպիսի առաջարկութիւնը նոյնպէս ընդունուեց երկարատև «կեցցէներով»: Այնուհետև կենացներ առաջարկուեցան տեղիս նահանգապետի, քաղաքագլխի, գեր. Խորէն եպիսկ. Ստեփանէի և տեղիս հայ հոգևորականութեան, ոստիկանապետի, ժողովրդական դպրոցների տեսչի և «Կրիմ» լրագրի խմբագրի, հայոց դպրոցի հոգաբարձու պ. Յ. Մելինեանի, եկեղեցւոյ վերաշինութեան համար հանգանակութեան գործի գլուխն անցած յարգելի պարոնների և ի վերջոյ ներկայ եղած հայ հասարակութեան կենացը: Ժամը 2½-ին ուրախ տրամադրութեան տակ ցրուեցին հիւրերը:

Ազենց:

* * *

Մեզ հարցնում են թէ հրատարակուելու՞ է արդեօք առանձին գրքով Վ. Փափազեանցի «Էմմա» վէպը, որի առաջին մասը տպագրեցինք անցեալ տարի և երկրորդ մասը շուտով կըսկսենք տպագրել:

Իբր պատասխան յայտնում ենք, որ մտադրութիւն կայ առանձին գրքով լոյս ընծայել այդ վէպը: Ուստի նրա տպագրութեան ծախսին մասնակցել կամեցողները թող բարեհաճեն վաղօրօք յայտնել մեզ իրենց ցանկութիւնը: Այս առիթով յայտնում ենք նաև, որ լոյս ընծայած գրքերի կէսի հասոյթը հեղինակը վճռել է նուիրել յօգուտ իւր հայրենակից գաղթականների:

* * *

Յունվարի 7-ին կայացաւ Թիֆլիզի հայոց գերասանական խմբի ներկայացումը—«Մեծապատիւ մուրացկաններ» որ երգիծաբան Յ. Պարոնեանի գրուածքից պիեսի են վերածել — և շատ անյաջող կերպով — պ. պ. Սարգսեանն ու Վրույրը: Արևոտում աղայի դերը կատարեց պ. Մամիկոնեանը:

Խաղը ընդհանրապէս շատ թոյլ անցաւ. գրեթէ ոչ ոք չէր կարողանում խօսել պօլսական բարբառով: Բացառութիւն կազմեցին միայն տիկին Ջաքէլը և մի նոր խաղացող պ. Զաւիցեան, որոնք յաջող անցկացրին իրանց դերերը: Թատրոնում հասարակութիւն քիչ կար:

* * *

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են.—«Յունվարի 7-ին Թաղիևի թատրոնում հայ դերասանական խումբը ներկայացրեց «Պէպօ» մասնակցութեամբ Թիֆլիզից յատկապէս հրաւիրուած պ. Տէր-Դաւթեանի: Թատրոնը հասարակութեամբ լիքն էր. դերասանները խաղում էին բաւականին անպատրաստ, իսկ պէէսը ժողովրդին մնում էր շատ տեղերում անհասկանալի, լեզուի պատճառով: Ինչպէս լսեցինք, այս ներկայացումը տրուեց ի պատիւ և յօգուտ պ. Տէր-Դաւթեանի և դրամարկղի ընդհանուր մուտքը եղել է 860 ռուբլի: Պ. Տէր-Դաւթեանը ներկայացման երեկոյին ստացաւ ընծայ մի արծաթեայ սեղմիկ *):

* * *

Ներքին գործոց նախարարութեան մէջ քննվում է այն խնդիրը որ կանանց թոյլատրուի համալսարանում դասախօսութիւններ լսել դեղավաճառութեան պրովիզորի աստիճան ստանալու համար:

* * *

Դեկտեմբերի 14-ին Թիֆլիզի Ժողովարանի դահլիճում յօգուտ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան կայացած բազարից եւ պարահանդէսից մուտք եղել է—3216 ռ. 90 կ. որից 652 ռ. պրէմիա ծախք—1010 ռ. 29 կ. զուտ արդիւնք յօգուտ Ընկերութեան մնում է—2206 ռ. 63 կ.:

Երեկոյթին և բազարին նախաձեռնող Իշխանուհի Մ. Թումանեանը խնդրում է մեզ «Արձագանքի» միջոցով յայտնել իւր խորին շնորհակալութիւնը այն բոլոր տիկնանց և օրիորդներին, որոնք նուիրեցին իրանց ձեռագործները և մասնակցեցին երեկոյթի կազմակերպութեան, նկարիչ պ. Գ. Դոլուխանեանին, որ զարդարեց դահլիճը, պ. Ն. Լինստրոմին, որ սիրալիր պատրաստակամութեամբ համաձայնուեց

*) Կան ուրեմն աշխարհիս երեսին երջանիկ մարդիկ, որոնց «պատիւն» և «օգուտը» միացնել գիտեն...

ՖԵԼԻԵՏՕՆ

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

(ՊԱՏԿԵՐ)

—

Ի՞նչ դրութեան մէջ էր մի ժամ առաջ Կուրկուռ [1]) գիւղի ռէս [2]) Հաջի-Կվօն [3]), յայտնի չէ. միայն այն վայրկենից որ մենք այս պատկերն ենք գծում, նա ըղձում էր իրեն կատարելապէս երջանիկ:

Արևը դեռ նոր էր Քարքէի ձիւնապատ լանջերը ոսկեզօծում և նրա շողերը դեռ նոր սկսել էին Մուրատայ գետաձորի մըշուշը հալածել, երբ ռէսը դուրս եկաւ տանից բոլորովին պատրաստ: Տարեմուտ լինելու պատճառով նա հագել էր իւր նոր անթարին, մէջքին փաթաթել գեղեցիկ գօտի. գլուխը զարդարել փնջաւոր փուշիով և ոտքերին ամրացել նոր չարուխներ:

Ջինջ ու կապուտակ երկինքը, որ կամար էր կապում Կուրկուռի հանդէպ բարձրացող Ս. Կարապետի լեռան վրայ, իւր ահաւոր խորհրդաւորութեամբ ջերմեռանդութիւն ներշնչեց բախտաւոր Կվօի սրտին, նա մերկացաւ փուշին և խաչ հանելով երեսը՝ իւր աւանդական աղօթքը կրկնեց. չնայելով որ այն միանգամ կարդացել էր արդէն:

Այնուհետև, ըստ սովորականին, նա մտաւ ընդարձակ գոմը, աչքէ անցրեց իւր զոյգ ձիաները, բազմաթիւ եզները, կովերը. անուշադիր չթողեց, նոյն իսկ, փայտակիր էշերին, նայեց բոլորի կերն ու կուրը. ապա մտաւ հորթանոցը: Այստեղ էլ նա դիտեց հեզիկ, մնջիկ պառկոտած հորթուկներին, շոյեց ու շփեց նրանց և ապա ելնելով բակը՝ հրամայեց քուրդ ախոռապանին թամբել իւր «Աղուրիկը»:

Չնայելով որ տանի պատճառով բոլոր տանն արդէն ոտքի վրայ էր, այսու ամենայնիւ, ռէսը ոչ ոքի չողջունեց. նոյն իսկ մեծ մամին «բարի լուս» չասաց, որովհետև դեռ ուխտ ունէր կատարելու.—Բաղդը, որ այնքան յաջողել էր իրեն՝ լցնելով իւր տունը մալ ու դովլաթով և Կուրկուռի մէջ իրեն առաջին «Ջօջը» դարձնելով, կամ «ռէսի» պատուաւոր կոչման արժանացնելով, այդ բոլորը նա պարտական էր այն գեղեցիկ սովորութեան, որ տարեմուտի առաջին օրը, դեռ ոչ ոքի շնորհաւորանք չասած, նա վաղ առաւօտանից բարձրանում էր դէպի Քարքէ, հասնում էր Ս. Կարապետ, ուխտ էր անում Լուսաւորչաշէն մատուռներում և խնդրում «մուրադատուին»՝ հովանաւորել իրեն և լցնել իւր տունը բարիքներով: Եւ «մուրադատուն» լսում էր նրան ու խնդիրը կատարում:

Եւ ահա այսօր էլ նա շտապ շտապ թռաւ իւր «Աղուրիկի» վրայ, ելաւ գիւղից, և արշաւասոյր դիմեց դէպի Ս. Կարապետ, որ թառած էր Քարքէի ձիւնապատ կատարներից մինի վրայ:

Վանքի ծառան յարգանքով ողջունեց Հաջի-Կվօին և յոժարութեամբ առաւ նրա ձին՝ բակում պտտեցնելու համար:

Այդ յարգանքը, որն, ըստ մեծի մասին, քուրդ բէյերն էին վայելում վանքում, գգուեց ռէսի ինքնասիրութիւնը, ուստի նրա ջերմեռանդութիւնը՝ դէպի Ս. Կարապետ՝ աւելի ևս փառուեցաւ: Նա մտաւ տաճարը յուզուած, երկրպագեց «մուրադատուի» նշխարներին և աղօթեց նրանց առաջ այնպիսի ջերմ զգացմունքով, որպէս չէր աղօթել երբէք իւր կեանքում: Ապա ծունր իջաւ Ս. Աթանագինէի, Ս. Ստեփանոսի և այլ մասունքների առաջ, այնտեղ ևս իւր տարեմուտի աղօթքները մրմնջաց:

Երբ նա ելնելով տեղից կամենում էր իւր տուրքը դնել պնակէ թասի մէջ, յանկարծ նրա ականջին հնչեց մի վշտալի ձայն.—«կոտրումէ . . .»:

Ռէսը ցնցուեցաւ: Նրան թուաց թէ՝ խօսողը վանքի ծառան էր, որ յայտնում էր իրեն թէ՝ «Աղուրիկի» ոտքը կոտրուել է, հետևապէս ինքը չի պիտի կարենայ տուն վերադառնալ:

—Աղ չեղնիր. էս օր նոր տարի է, ըմեն գեղցիք մըր տուն պիտ գան շնորհաւորք ըսելու. ինչպէս կեղնի որ գեղի ռէս ուր տուն չեղնի..., մտածեց ինքն իրեն Հաջի-Կվօն և դուրս թռաւ տաճարից:

Բայց «աղուրիկը» ողջ առողջ կանգնած էր վանքի բակում: Ծառան նոյնպէս ոչինչ չգուշեց իրեն:

—«Է՞հ, փորձանք չէ եղեր . . .» մտածեց ինքն իրեն ռէսը և մի քանի փարայ գնելով ծառայի ափը, աշտանակից ձին և դուրս ելաւ վանքից: Բայց գեղն իջնելուց առաջ, նա այցելեց նաև վանքից դուրս գտնուող Ս. Անտօնի, Ս. Կրօնիդեայ և Եօթն Խոտաճարակների մատուռները և նրանց մէջ էլ աղօթեց ջերմեռանդութեամբ:

Երբ վերադարձաւ, իւր տան մէջ արդէն տիրում էր մեծ կենդանութիւն: Գիւղացիները հաւաքուել էին ռէսի նոր տարին շնորհաւորելու: Նրա եղբայրներն զբաղուած էին հիւրերի ընդունելութեամբ: Հարսերը թևերնին սոտտած՝ սեղան էին բանում և երկար, գոյնզգոյն սփռոցների վրայ շարում հետզհետէ պատուայ ուտելիքներ, լուբիա, սիսեռ, բոխ, մեղրի խորխիս և թաժա յօշ, որ դնում էին սփռոցի վրայ կոյտերով:

Իսկ մամը կրակի առաջ կանգնած երկարաբուն չերէփով խառնում էր ռոպէ փիլովը, որ ախորժելի խլլլոցով եփում էր ջօջ-պղնձի մէջ . . .:

Երբ ռէսը ներս մտաւ, գիւղացիք յարգանքով շնորհաւորեցին նրա «նոր տարին» և երկար ու սրտագին բարեմաղթութիւններ արին նրա շէն օջախի համար: Ապա սեղան նստան Կվօի տան բարիքները վայելելու: Չանցաւ մի քառորդ ժամ և ջօջ-պղինձը դատարկուեցաւ, որովհետև ուտողները շատ էին: Հաշուով դրացիններին բաժին չի պիտի մնար: Բայց մամը դրա մասին հոգացել էր կանխաւ: Ջօջ-պղնձից զատ՝ նա ունէր կրակի վրայ շատ ուրիշ պտուկներ, որոց մէջ զատզատ սպաս էր պատրաստել: Երբ տան հիւրերի բաժինը վերջացաւ, նա կանչեց իւր մօտ փոքրիկ թոռներին և նրանցից իւրաքանչիւրին մի պտուկ տալով՝ ուղարկեց նրանց այն դրացիներին, որոնք տան մէջ աշխատաւոր տղամարդ չունենալով՝ ներս ու դուրս անելու սովորոյթ չունէին:

—Աս դուն կանիս Խէչօյի աղջկան . . . աս ալ Էրէցի կնկանը կտաս . . . աս ալ Մկօ, Չաղօ-ի տունը տար . . . աս ալ Թումէն Զմօ-ին կտայ . . . աս ալ դուն շուտով վաղցուր Մարօ-ին . . . աս մէկն ալ Լուսօն Ալմօ-ին կտանի . . . : Պառաւն այս ձևով պտուկները բաժանելով՝ վերջապէս ինքն էլ ելաւ «բարի-օր» ու «բարի-տարի» մաղթեց հիւրերին և անցաւ օդայի անկիւնը հարսների հետ ճաշելու:

Հազիւ հիւրերը գաւաթները բարձրացրին տան տիրոջ ու ռէսի կենացը պարպելու, ահա դարձեալ նոյն վշտալի ձայնը հնչեց.

— Կոտրումէ . . .

—

—Ի՞նչ, տան սիւնը, զռչեց յանկարծ ռէսը և վեր թռաւ տեղից . . .

—Ի՞նչ սուն, ինչ սիւն. ծռել [4]) ես ինչ է. երխէն ամանը կոտրեր է, կերակուր չըկի տար Էնօր. իմցի [5]) քիչ մը իշխնք [6]) ինչ պտի կղնի մըր խլլաջ . . . խօսում էր ռէսի կինը աղէկտուր ձայնով՝ աչքերը յառած քինահար ամուսնու վրայ:

Հաջի-Կվօն աչքերը տրորեց և նայեց չուրջը . . . աւաղ, նա մինչև այդ երազի մէջ էր եղած: Չկար ոչ Կուրկուռը, ոչ Քարքէն, ոչ Ս. Կարապետը, չկային ոչ կուրկուրցիք, ոչ իւր եղբայրները. ոչ մամը ոչ հարսները, ոչ ջօջ-պղինձն իւր ռոպէ փիլաւով, ոչ գոյնզգոյն սփռոցները՝ լիքնից բազմազան բարիքներով:

Տեղը, ուր նա պառկած էր, Հալաբարի ժամանակաւոր պատսպարանի սենեակներից մինն էր, ուր ապրում էին չորս բազմանդամ ընտանիք, որոնցից իւրաքանչիւրը յատկացրել էր իրեն սենեակի մի անկիւնը, մէջ տեղը թողնելով իբր հասարակաց սեփականութիւն: Այդ հազիւ տաս քառակուսի սաժէն տարածութեան վրայ՝ պառկոտած կամ նստած էին մօտ քսան և հինգ հոգի — կանայք, տղամարդիկ և տղայ ու աղջիկ մանուկներ. ամենքն էլ հազիւ ցնցոտիներով ծածկուած, ոմանք, մինչև անգամ, կիսամերկ: Չնայելով դրսի ցրտին, սենեակն, այսու ամենայնիւ, տաք էր, բայց նա տաքացած էր ոչ թէ կրակարանի շնորհիւ, այլ բնակիչների արտաշնչութիւններով: Այդ պատճառով և այդ տեղի օդը խեղդող, ապականուած և կարի զարշահոտ էր: Սակայն այդ ամենը չէր արգելում թշուառներին գոհանալ Աստծուց՝ որ գէթ մի անկիւն ունէին պատսպարուելու համար:

Իւր դրացիների նման՝ Հաջի-Կվօն էլ ունէր իւր կինն ու զաւակները: Վերջինների թիւր հասնում էր հինգի: Դրանցից հասակաւորը միայն աղջիկն էր, Լուսօ անունով. միւսները մանր տղաներ էին: Նրանց ունեցած գոյքը ոչնչով աւելի չէր հարևանների ունեցածից: Երկու կիսամաշ թաղիք, որոնք ծառայում էին նրանց և՛ անկողնի և՛ զգեստի տեղ և որոնք, սակայն, չէին բաւում եօթ հոգուց բաղկացած ընտանիքին (ըստ որում նրանցից մի քանիսը գլուխները պառկում էին միայն մերկ յատակի վրայ), մի քանի կոյտ ցնցոտիներ, որոնց ինչ եղած լինելը չէր որոշվում, բայց որոնք ծառայում էին վերմակների ու բարձերի տեղ. մի հին, հողէ կուժ, որ կոծկած էր ձուաշաղախով և որով ջուր էին խմում նրանք և վերջապէս մի հողէ պտուկ, որով կերակուր էին բերում «բարերարների» հիմնած «ձրի ճաշարանից» և որն այդ վայրկեանին չէր երևում մէջ տեղ: Ահա բոլորը, ինչ որ ունէր աշխարհում երբեմն Կուրկուռի ռէս, հարուստ ու բաղդաւոր Հաջի-Կվօն:

Սթափվելով քնից, և, միևնոյն ժամանակ, դժգոհ լինելով այդ սթափումից որն իւր առաջ բացել էր սևսուր իրականութիւնը, իւր ամենօրեայ թշուառութեան պատկերը, Հաջի-Կվօն նորէն կամեցաւ պառկել, ցանկանալով, կարծես, նորէն երազել և մի ժամ ևս, գէթ քնոյ մէջ, երջանկանալ:

Բայց կինը թոյլ չտուաւ նրան օգտուել այդ ցանկութիւնից:

—Քա՛, դուն դաման կըքնիս. չըմ պտի կրնա իմցունել քեզի, ասաց նա բարկութեամբ և ամուսնուն բոթելով:

Հաջի-Կվօն նորէն չոկուեցաւ, տրորեց աչքերը և յուլաբար յօրանջելով ասաց.

—Ի՞նչ աղէկ երազ մը տեսայ, Մարօ, աղէ՛կ կեղնէր չիմցուցէիր [7]) ըսձի:

—Ի՞նչ երազի վախտ է, մըր տղներ քանդվէր է, նկատեց կինը:

—Ըշտէ տեսար որ չինուեր է: Հարցուր քեզի ըսեմ—Նոր տարի էր. Սուրբ Կարապետ գացի, ուխտ ըրի, դարձայ գեղ. ըմէն Կուրկուռի գեղցիք մըր տունն էն ժողվեր. մեծ դաղէն [8]) ջօջ-պղինձը ռոպէ փիլաւով լեցուն ըմենուն կըցրուէր [9])

—Ինչէ՞ր կըխօսիս, քա՛, ես կըսեմ մըր տուն փլեր է, դուն էրա՛զ կըպատմես, բարկացաւ Մարօն:

—Ի՞նչ փորձանք է եղեր, հարցրեց Կվօն, հազիւ ուշադրութիւն դարձնելով կնոջ վշտալի ձայնի վրայ:

—Չըս տեսնա որ ըմենուն ճժեր [10]) չէլափիլաւ առան ու կերան, չըման մըր ճժեր մնացին ու կլան:

—Հա՛, կէս օր էղաւ. ո՞ւր է Լուսօն, մըղի բան չըբերա՞, հարցրեց Կվօն տարակուսական եղանակով:

—Էկաւ. չըս տեսնա. էն խտար է վախցէ որ պատի տակ կծկվեր է:

—Ի՞նչ է եղէ ուրեն:

—Ճաշամանը կոտրեր է ճամպուն, հիմայ բաժին չընի տար մըղի:

—Ի՞նչ կըսես. ինչ ըրի՞ որ կոտրեցիր. դարձաւ հայրը աղջկան այնպիսի մի յուսահատական ձայնով որ, կարծես թէ, աշխարհը փուլ էր եկել գլխին:

Լուսօն, արդարև, երկիւղից կծկուել էր պատի տակ: Նա մօտ տասն և չորս տարեկան նրբակազմ մի աղջիկ էր: Չնայելով ցնցոտիներին, որոնցով ծածկուած էր խեղճը, նրա դէմքը գրաւիչ և աչքերը գեղեցիկ էին: Վատթար սնունդը և վերջին ժամանակի չարքաշ կեանքը միայն զրկել էին նրան իւր հասակին յատուկ զուարթութիւնից. Նա դժգոյն էր և դալ-

1) Մշոյ գիւղերից մինը:
2) Տանուտէր:
3) Մահտեսի-Գէորգ:
4) Խելագարուել:
5) Զարթիր:
6) Նայինք:
7) Զարթեցնէիր.
8) Տաշը.
9) Կըբաժանէր.
10) Երեխաներ.

զեկավարել պարէրը։ Յովկսեան ատենապետ ընկերութեան, պ. պ. Ծատուրեանին, Տէր-Մարգսեանին, Յովսէփեանին, Արզումանեանին և այլ անձանց, որոնք նպաստեցին երեկոյթի յաջողութեանը, և նմանապէս պատմեանց ուղարկողներին և «Արձագանք», «Մշակ», «Նոր-Դար», «Տարազ», «Տիֆլիսկի Լիստօկ» և «Նովօէ Օբօզրէնիէ» խմբագրութիւններին, որոնք ձրիաբար տպեցին երեկոյթի յայտարարութիւնները։ Պրեմիաներ ուղարկել են հետևեալ անձինք։ Նոցին պայծառափայլութիւն իշխան և իշխանուհի Գալիցինները—100 ռ., պ. պ. Գ. և Ա. Մ. Թումանեանները—100 ռ., Մ. Արամեանց—50 ռ., Ա. Ղուկասեան—50 ռ., Ս. Թումանեան—25 ռ., Ն. Կլասինկեան—25 ռ., բժիշկ Մալինին 22 ռ., Ե. Կըսաքինիկեան—20 ռ., Յ. Աղամեան—20 ռ., Մ. Միրզոյեան—15 ռ., 80 կ., Ե. Կրասինիկեան—15 ռ., Գ. Աղեխանեան—10 ռ. 80 կ., տիկ. Ե. Քամխարեան, պ. պ. Գ. Միրզոյեան, Բ. Դոլուխանեան, Ա. Ոսեանեան, Ա. Դիանճուրեան, Ա. Պարոնեան, Կ. Խատիսեան, Կ. Տէր-Մարկարեան և իւրաքանչիւրը տասնական ռուբլի և զանազան անձինք 118 ռ. 40 կ.։

* *

«Մշակին» հետագրում են Վ. Էջմիածնից յունվարի 9-ին.

«Միհրան Գալուստ Տէր-Միկոյեանը չար ծանր և յանկարծակի հիւանդ է»։

ՄԵՐ ԹԵՄԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ ՓՈՔՐԱԳՈՅՆԸ

1897 թւի յունիսի 16-ից շրջաբերական հրաման Թեմիս բոլոր քահանաներին։

«Վեհ. կոնսիստորիայս հայոց Աստրախանի այսու տայ գիտել՝ թէ համաձայն օրագրոյ իւրոյ ի 21-ն մայիսի ամսոյս, հիմնելով ի վերայ բանաւոր պատուիրանի Նորին Բարձր-Սրբազնութեան Տ. Սուքինոպէ Թեմիս, մոռզուկեցի ջանքնակ Մովսէս Տուրփայեանց վասն բազմապիսի յանցանաց ԻՍՊԱՌ արձակելով ի պաշտամանց սպասաւորութեան եկեղեցւոյ զրկել յիրաւանց կրելոյ զղոյղ և զսքեմ, ըստ որում հրամայելով է գործակալի Գէորգեանի վասն մերկացուցանելոյ զնա ի հոգևոր վերարկուէն, արգելելով սպասաւորել ի սամն Աստուծոյ»։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Թեմական իշխանութիւնը կ'առաք չէ անում։ Հրամանը խիստ է և ազդու, իր անտառակութիւններով հռչակուած միրացու Մովսէսը վերջապէս պատժվում է իր արդարև բազմապիսի յանցանաց համար։

Թեմական իշխանութիւնը արտաքսում է խայտառակ միրացու Մովսէսին Աստուծոյ տանից և լռիկն էլ հանում։

Բայց ահա նոյեմբերի 22-ին Սուքինոպ Թեմիս Նորին Բարձր Սրբազնութիւն Արխիմանդրիտս արքեպիսկոպոս հրամանագրէ. «Առաջադրեցի վեհ. կոնսիստորիային (ժամս զի զղիր (մեռացել են որ լուղիդ ջինջ են և այլ ևս զղիր չէ, այլ Մովսէս) Մովսէսի Տուրփայեանց սացին եկուսինք վերստին սպասաւորելոյ յեկեղեցւոյ, իբրև ժամանակաւոր ծառայոյ, մինչև ի պատահել մեր այդր անձամբ հասու լիցուք ուղղութեան վարուց նորա»։

Ա.

28 դեկտ. 1897 թ.
ք. Մոզդուկ.

* *

ԱՄԲՈԽԸ

(«Արձագանքի» յատուկ թղթակցից)

ՓԱՐԻԶ 3 յունվ. 98 թ.

Ամբոխը կենդէ և կրապաստիցնէ զլու։ Բնութեան տարրի մը նման, կոյր, հզօր և քմահաճ է։ Անոր շարժումները սատաւել են ովկեանի տատանումներուն պէս, և անոր խորը կործանումը կը բնակի։

Ամբոխը անգիտակից է. և կրկնպաշտ այն հովին համեմատ որ զինքը ցնցէ։ Երբ շունչը գայ գեղեցկութեան հորիզոնէ մը, ամբոխը վսեմ կը դառնայ, իր կոհակները ստեղծագործութեան մարձեր կ'ըլլան, և իր ծփումէն ազնիւ երգ մը կը թնդայ։

Բայց թանձր ու յամառ տարրն է միշտ, և մեծ գաղափարը երկար ինըզագնելէ յետոյ կրնայ անոր մէջ թափանցել, և նոյն իսկ երբ արբէ անոր և տարածուի անոր մէջ, կը կոխանցնէ իր զուտ մեծութիւնէն, բայց ուժ կը շահի անոր բազմապատիկ կրկնումէն։ Գաղափարներու Ամբոխին այդ զուգաւորումներէն է որ կը ծնին իրքտններու կրակոտացումները։ Սակայն, սովորաբար, անթափանց է ամբոխը, և չարի զօրութիւն մը կ'դառնայ. սոսկալի կրքերը զանի կրկնակին, աղօտ բնազդներ զանի կը յորդին, և այն ատեն ադմի հեղեղը կ'ըլլայ, ահարկու պղպջակներով, բանդուրական վէսկվէսանքներով, զազիր ու զարհուրելի։

Առավ, գործունէութեան մարդուն համար, Ամբոխը ուսումնասիրութեան մեծ առարկան և ստեղծագործութեան հրաշալի միջոցն է, ուժը որով կը կատարուին մարդկային մեծանմաքրութեան հերպարանափոխութիւնները։ Բայց խոհման մարդուն, զուտ գեղեցկութեան և զուտ գաղափարի մարդուն համար, անի՛ թշնամի տարրն է, անկարող՝ իր նախնական հօգերանութեամբը՝ բարձունքներուն հասնելու, և այն ատեն, շարշարանք է ամբոխին շփումը՝ ինչպէս շողիքոտ բերնի համբոյր մը, ինչպէս լղճող և փտնդաւոր հպում մը, որ կ'աւրէ մտածումով չինուած հօգիներուն մաքուր ներքնանկարը։

Այդ խորհրդածութիւնները կ'ունենայի այս օրերս, տեսնելով ամբոխը որ Փարիզը կ'ողողէր՝ Ծնունդի Կաղանդի ուրախութիւններէն թմրած։ Անշուշտ Փարիզի ամբոխը ամենէն զօրակ ու թեթև ձևն է մարդկային կուտակումներուն, և սիրուն տաղաւաուն ծովի մը տեսքը կունէ երբ խենդ հովը որ իր մթնոլորտին յատուկ է՝ փչէ և զինքը տաք հանէ։ Զգուտ ու զուարթ ամբոխն է աս, որուն բոլոր անեկծումները պարի շարժումներ ունին, որուն յեղափոխութիւններն անգամ գլիցաղներգական դիմակահանդէսի ձև առած են։ և չեմ գիտեր աւելի քմածին համապատկեր քան այդ օրերին ամբոխը, բարեկենդանի օրերուն, կոնֆէտտիններուն երփներանգ անձրևին տակ, զաւեշտական թափօրներուն շուրջը, ծըկուն, հրապուն թաւալումը։ Բայց միշտ ամբոխն է, իր խոշոր ապաշխանութեամբը նեղացուցիչ իր անյագ և ապմկալեց ախորժակովը անասնելի, և որ կրնայ՝ մէկ վայրկեանէն՝ վայրագ դառնալ, ու իր խնդացող դիմակը մահուան ծամածութեան փոխարկել։

Այս օրերս, տօնական սալոսուն էր որ կ'անցնէր փողոցներէն։ Խաղալիքներ ծախող պզտիկ շարժական խանութներուն ասջէն, զուարճացողներով լեցուն սրճարաններուն եզերքէն, ամբոխը կը հոսէր, նոր տարի մը սկսելու վերանորոգիչ հրճուանքով՝ կայտառ։

Այս նոր տարին ինծի սուգեր յիշեցուց, և սրտիս ըլլալու մղում զգացի. ըրջջացող կոհակին եզերքը, մութ անկիւններու մէջ, խեղճեր նշմարեցի որոնց ձեռքը անդադար կերկնէր դէպի երջանիկները, բոլոր զրկուածները մտքս եկան, և աչքիս երևցաւ հեռաւոր երկիր մը՝ զոր իմ սիրտս կը ճանչնայ, մեծ ադւոր երկիր մը որ հիմա կաղանդը կ'առնէ, մոխիրի մէջ նստած, սուգին, մութին և անօթութեան մէջ՝ գեանակործան սիրտս սեղմուեցաւ, տանեցի այս զուարթութեան յորդումը որ դժբաղդներուն մերկութիւնը աւելի լրբօրէն կըշեշտէր. և յանկարծ, գիշ շրջապատող ընաւոր ամբոխին մէջէն, աչքիս սև ամբոխը երևցաւ, բոլոր ամբոխները զոր ուրիշ ատեն տեսեր եմ, աղերական կամ անզուր կամ քաղցնելի ամբոխները։ Արթհեսև, իմ կեանքիս մէջ՝ ինծի տուեցան բազմապատիկ երեսներով տեսնել ամբոխը, իր ամեն տեսակ դիմագծութիւններովը։

Ահա, էն առաջ, աղէխարշ ամբոխ մը, հայ ամբոխը, զոր տեսայ 95-ին, Սահմանադրութեան տարեդարձի օրը, անտահման յոյսով մը փոխուած։ Հազարաւոր հայաստանցիներ, շատը բեռնակիր, բանուոր, արհեստաւոր, խեղճ մարդիկ, դարաւոր ցաւերու տակ ճմլուած, եկեր էին ազգային հանդէսը տօնելու... Հաւաքական տառապանք մըն էր որ հօծ ալիքներով կուտէր և Յոյսէն խենդեցած՝ փրփրացայտ կըպայթէր Եղիպուէի դաշտը այն օրը թնդալ լեռնական պարերուն, աւետաւոր երգերուն, եղբայրական գիրկընդխառնումներուն տակ։ Հիմա, կըսարսռամ մտածելով որ այդ բոլոր միամիտ ուրախութիւնը՝ մութին մէջ նիւթուող Աղէտքին վերև կը թառանէր, և թէ բոլոր այդ պարողները այսօր սուգով փաթթը թուած են կամ պղինծ հողի մը մէջ կը քնանան…

Ուրիշ օր մը, արհաւիրքի ամբոխը տեսայ։ 95-ի աշնան այն օրն էր որ յանկարծ լուր եկաւ թէ անգլիական նաւատորմիղը Մարմարա մտած էր. սարսափը վայրկենապէս քաղաքին մէկ ծայրէն միւսը վազեց. տաճիկները, գեավուրին աճէն լռապատառ, քրիստոնեաները՝ կարծելով թէ կոտորածը անխուսափելի է, զարհուրանքի վայնասունի մը մէջ հապշտապ փախչիլ սկսան, փողոցներուն մէջէն, խառնափնտոր, խելակորոյս. քառսային մրրիկ մը մարդկոց, մեռելատիպ դէմքերով, յիմարութեան շարժումներով, և որոնք կըվազէին, շուարած, գողդողուն ու միանգամայն վայրագ, իրար ճզմելով և խրամէ սոսկալով, վտանգութեան ողին հալածական։

Բայց այն ամբոխը որ ամենէն աւելի ահաւոր, այս վայրկեանիս դէմս կը կանգնի և գիս կ'ճզմէ իր ուրուականի սևեռմամբը, ճիւաղային մէկ տեսիլքն է կատղեցուցիչ մարդկութեան մը, որ ինծի երևցաւ 92-ին, ցորեկ մը, Պոլիս, Դօլմապահչէի մզկիթը շրջապատող մեծ պարտէզին մէջ, Րամազանի Նախընթաց օրը։

Այդ օրը, կառավարութեան կողմէ ուղարկուած ընկալագրեր կը բաժնեն աղքատներուն. Պալատ ամբողջ ժահմեդական մուրացկանութիւնը, քաղաքին ծակուծուկէն դուրս թափած, եկած կուտակուած էր պարտէզին մէջ՝ կայսերական շնորհը ընդունելու։ Տեսարանը ահռելի էր։ Պարտէզը եղերող վանդակապատին դրսէն՝ ինչ որ կը տեսնէի, մեծ պըրտոր ծփանուտ ծով մըն էր գլուխներու, որուն մէջ կնկան թիւլպէնտները ալտոտ ճերմակութիւնը կըխայտախառնէր կանաչ փաթթոցներով, կարմիր ֆէսերով, զոլշ խոյրերով։ Բոլոր գլուխները, մէջէ մէջ մտած, կարծես իրարու փակած, ամենը մէկ՝ լոյծ ու թանձր խմոր մը կազմած, կերևրային եռացող լուացքի—ջուրի պղպջակներու պէս և այդ ամբողջ անանուանելի ծփանքը կըղիմէր դէպի բարձրաւանդակը, ուր, խլրտացող գլուխներու մէջ խղդուած՝ կըզուշակուէր խորհօղաւոր բաշխողը։ Տեղ տեղ, պատառուածքներու մէջէն, ոստիկանի բիրտ շարժումներ կընշմարէի, խուժանը զսպելու, կարգապահութիւն հաստատելու ջանացող գաւազանի հարուածներով. բայց գաւազանները ու ոստիկանները կըսուզուէին կըկորսուէին մարդկային մսի մածլսարոսին մէջ որ հեւալհեւ կըթանձրանար։

Վանդակապատին մօտ, ծառերու տակ, պզտիկ խումբեր կային, գետինը ծալլապատիկ նստած կամ ոտքի վրայ, անճարակները, ծոյլերը կամ հաշմերը, որոնք չէին ուզած կամ չէին համարձակած հրմշտկումին մէջ մտնել, և կըսպասէին, որ կոհակը հասնէր։ Զիրենք մօտէն՝ ողոջ կըտեսնէի, և անոնցմէ հասկցայ թէ ինչ տարբեր կըբաղկանար ամբոխը. մեծ մասամբ թախթարներ էին, քիւրտեր, թիւրքեր, չերքէզներ, նոյն իսկ գնչուներ և դեռ ուրիշ անորակելի տեսակէ մարդիկ, բոլոր թափթփուքը օսմանեան կայսրութեան այլազան մահմեդական ցեղերուն, այլանդակ ահագին գլուխներով, զարհուրելի մօրուքով, գիչակերի բերնով, ոճիրի աչուրներով մարդիկ, հաստ մազոտ ցնցոտիներու մէջ, խոշոր ցուպեր ձեռքերնին. մաշկացած սևցած մսով անասնանման կիներ, կիսամերկ, լաչակնուն մէջէն՝ վախ տուող նայուածքներ սահեցնելով, կանակներն ճչացող վիժուկներ կրելով պարկի մէջ կախ. և խեղանդամները, դժոխքի երեւոյթներ, կրաններ առանց թևի, հալած բիբերով աչքեր, դէմքեր, որոնց քիթ ու բերնին տեղ խոռոչ մը կըրացուէ, մարմիններ վէրքերով, ախտերով, ծակերով, ուռեցքներով բեռնաւոր։ Անօթութենէն կատղած, սպիկացումէն փոտած, հիմաւուրց մոլեռանդութենէն խոժոռած դէմքեր, փողոցին աղբէն դուրս ցատկած, պիղծ, ու սարսափելի, գազանային աստկեր մարդկային կերպարանքին։

Ցանկարծ, ճիչեր լսուեցան. քանի մը պզտիկ տղաք ճզմուեր էին խուժանին մէջ. կին մը կոխոտուեր էր. պոռչտուկ մը փրթաւ… Զգեցի փախայ, ահաբեկ. ու երկայն ատեն, ճամբան, անհուն խուլ խժլուոցը գիս հալածեց։

Այս մղձաւանջի պատկերը գիս կըշարչարէ հիմա, աչուրներս կ'այրէ խղճի խայթի մը պէս։

Արշակ Չօպանեան։

*
* *

ՔԱՂԱՔՈՒՄ

Յունվարի 6-ին, երբ խաչը Յորդանանը ընկղմեցին, լսուեցան ժողովրդի կողմից սովորական հրացանաձգութիւնները և գնդակներից մէկը պատահաբար վիրաւորեց 11 տարեկան մի տղայի Ադամ անունով, որ Մարտոբ գիւղի Տիգրան Բուրդուեանի որդին էր։ Վիրաւորեալին անմիջապէս տարան Միքայէլեան հիւանդանոցը։ Մի թեթև վէրք ձախ ձեռքին ստացել է նաև Աղեք Յովսէփեանը։

—

Երևանեան հրապարակի վրայ, Մրգավաճառ Հաջի-Ալի-Ակպար Ռախմանովի խանութում, յունվարի 6 ին, 4-րդ քաղաքամասի ոստիկան Սկիդելսկին ձերբակալեց աճապահպատակ Պետրոս Գրիգորեանին, գտնելով նորա մօտ մի ռուբլիանոց կեղծ թղթադրամ։

—

Յունվարի 6-ին, Հավլաբարում քաղաքային բժիշկ Գուլուլեանը աշնչացրեց 25 հատ ձուկ, իբրև միանգամայն փտած։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

** Լրագիրներում հետևեալ նկարագրութիւնն ենք կարդում մայրաքաղաքների պարբերական հրատարակութեանց գործունէութեան մասին անցեալ տարուայ ընթացքում։

«Ամսագիրների էջերում չյարուցուեց ոչ մի այնպիսի խնդիր, որ յուզի հասարակութիւնը, ստիպի նրան շարժուել, ոգևորուել և անհամբեր սպասել հետևեալ համարներին… Քննվում էին նոյն խնդիրները, որ ահա տասնեակ տարիներ շարունակ քննուել են ամսագիրներում և այն էլ շատ տաղտկալի, կարծես պաշտօնական ձևով։

«Ամսագիրների թիւը և ուղղութիւնները անփոփոխ մնացին և ոչ մի նոր ամսագիր չծնուեց»։

Համաձայնելով այդ խօսքերի հետ ամսագիրների տաղտկալի անբովանդակութեան մասին, պէտք է նկատենք, որ ամսագիրներից մէկը պակասեց։ Ինչպէս յայտնի է, չորս նախարարների (ներքին գործերի, լուսաւորութեան, արդարադատութեան և ռուսաց Սինօդի աւագ-դատախազի) վճռով ընդ միշտ դադարեցրած է «Նովօյէ Սլօվօ» ամսագիրը։

կանչօր. ձեռքերը նիհար, կուրծքը ճնշուած, բայց դէմքի հրեշտակային համեստութիւնը զերող էր և յանկուցիչ։ Երբ հայրը սրտոված նայեց իւր վրայ, խեղճ աղջիկն, ասես, տեղն ու տեղը հալուեցաւ։

—Ի՞նչ բբիր որ կոտրեցիր, կրկնեց հայրն իւր հարցմունքը։

—Պաղի 11) վրէնուաքս փսսաց... 12) հազիւ լսելի ձայնով պատասխանեց Լուսօն։

—Ցեամ, հարցրեց հայրը նորէն.

—Ես պատայ 13) գետին, աման լէ հետըս ի կոտրաւ։

—Թող քո ոտք կոտրէր, մըր բաժնի աման սաղ մընէր... սրտմտած գոչեց Կվօն։

—Ի՞նչ երէխի վրէն կըպոռաս, ժըխօ էնի հալվեր է ուր տեղուն. հոգին պէտի աանէ՞ս... դարձաւ Մարօն ամուսնուն։

Վերջինս խեթ խեթ նայեց կնոջ վրայ և ոչինչ չպատասխանեց։ Այդ հայեացքի մէջ, սակայն Մարօն կարող էր այս խօսքերը կարդալ.—«ինչպէս թեթևւաբար ես վերաբերում դէպի քեզ հասած դժբաղդութեանը, ով կին, մինծէ չգիտես թէ ինչ է նշանակում «հայոց բարեկարնելի» նուիրած փողերով և բարձրաստիճան «խնամակալների» հոգածութեամբ զնուած ճաշամանի 14) կոտրելը… Հաջի-Կվօն չյուսահատեց, երբ գրքերն իւր տունը թալանեցին, մայն ու դովլաթը տարան։ Նա մտածեց թէ հեռւում ունի եղբայրներ, որոնք օգնութեան ձեռք կըպարզեն իրան, ուստի չտատամսեց «ծժերն» ազատել կոտորածից և նրանց հետ միասին փախաւ, եկաւ «աւետեաց երկիրը»… Բայց դու, հօ, Մարօ, տեսար թէ այս երկրում ինչպէս են բախշում «փաթը և մեղրը», և մանաւանդ թէ ինչպէս են այդ բարիքը «աւատօրէն» բաժանում… ինչու ուրեմն չես յուսահատում. ինչու չես ցանկանում որ «Լուսօն ոտք կոտրէր, մըր բաժնի աման սաղ մընէր…»։

11) Սառուցի.
12) Սահեց.
13) Ընկայ.
14) Դրանց մէկը Թիֆլիզում արժէ 8 (ութ) կոպէկ։

Այո՛, այս էր Հաջի-Կվօի հայեացքի նշանակութիւնը։ Բայց Մարօն ժամանակ չունէր այդ հայեացքը քննելու։

—Ի՞նչ ոնաէր, կրմոմեց էր 15) գնա ընտեղ (ճաշարան), կեղնի օր մի բանի կէնա։

—Ի՞նչ կրնամ ընել, կնիկ, հարցրեց Կվօն բարկացած։

—Մէկ ուրիշ աման մ'ուզէ։

—Դուն չըսիր թէ՝ կոտրեր եմ աման, դարձաւ հայրը աղջկան։

—Ըսի, ուրանք ըսին թէ՝ մըղի կըխափիս օր էրկու անգամ բաժին տանիս էսօր…

—Հա, տեսար, կնիկ. ընձի ալ էդմալ 16) պիտի ըսին, պրդարացրեց Կվօն իւր անշարժութիւնը։

—Ամա՛ն, այ մարդ, ճժեր անօթի կըմեռնին, գնա, բալքի ճամբան մ'ընես, թախանձեց Մարօն։

—Ըսի օր չեմ կրնայ. ինձի ալ էդմալ պիտի ասին՝ թէ կըխաբեմ։ Ամօթ չէ, Հաջի մարդ, այդ խօսքը լսիմ…։

—Էհ, ճժեր քաղցած մեռնին.

—Թող մեռնին։ յամառեց Կվօն։

—Էլի, գնա, թէ Աստուած կըսիրես, էսանց սաղ օր անօթի պահել չեմ կրնայ։

—Ցամաք հաց °ս բերիր է, թող հաց ուտեն։

—Էհ, վաղն ինչ էնինք. երկնուց ամանն պիտի հանեն մեզ, ըմէնու ճժեր սոք բաժին ուտեն, իմ ճժեր էնօնց իչեն 17)

—Չըմ կրնայ, ըսի քեզի... բարկացաւ Կվօն։

Երեխաներն, որոնք մինչև այդ առլիչ ապուշ նայում էին ծնողների վրայ, տեսնելով իրենց հօր յամառութիւնը, սկսան խղճալի ձայնով լալ։

Լուսօն նոյնպէս փղձկեցաւ, որովհետև չարիքի պատճառն իրեն էր համարում։

Երբ Կվօն աղջկայ դէմքի վրայ գլորուող արցունքները տեսաւ, էլ չյամառեց։ Նա վերկացաւ իսկոյն, ծածկեց

15) Ելի՛ր։
16) Այդպէս։
17) Նայե՛ն։

հնամաշ փուչին և դանդաղ սրտով գնաց։

—Ամա՛ն սուրբ Կարապետ, աս ինչ զուլում բերիր մըզի… մրմնջաց նա և դուրս գնաց։

«Ջրի ճաշարանի» բակն արդէն գաղթականներ էր, երբ ներս մտաւ Հաջի-Կվօն։ Մի ժամ առաջ այդտեղ խռնուած էին բազմաթիւ գաղթականներ, որոնք եկած էին տանելու իրենց «բաժինը», որ բաղկացած էր երկու փունտ հացից և մի աման սպասից—իւրաքանչիւր հոգւոյ համար։ Ամենքն այժմ այդ բաժիններն առել, հեռացել էին։ Մնում էին միայն ընտանիք չունեցող գաղթականներն, որոնք ճաշում էին հէնց այդտեղ, «ճաշարան» կոչուած այդ տան երկու սենեակներից մինում։

Բակում անցուդարձ էր անում ոստիկանական մի պաշտօնեայ, իսկ ճաշարանի միւս սենեակում՝ օրիորդ վերակացուն։ Սաջինը ռուս էր, երկրորդը՝ հայ։ Երկուսն էլ սպասում էին որ ճաշող գաղթականներն գործերնին աւարտեն և իրենք ճաշարանը փակելով հեռանան։

Ոստիկանը տեսնելով Կվօին, որ ներս էր մտնում բակը, մօտեցաւ նրան և հարցրեց կէս ռուսերէն և կէս հայերէն.

—Что хочешь, ինչ ուզում։

—Աղա, էնեւէն աման կոտրաւ, աման մ'ուզեմ մըր բաժին տանինք... խօսեց Կվօն և ժպտալով և քծնելով.

—Что онъ говоритъ, посуду сломалъ?, դարձաւ ոստիկանը վերակացու օրիորդին, որ այդ միջոցին պատուհանին մօտենալով, լսում էր իրենց։

—Да, кажется его дочь сломала посуду, պատասխանեց օրիորդը և պատուհանում Կվօին անէլացրեց.—այժմ մըտեղից աման տանք քեզ։

—Հոգուդ մատաղ, աղջիկ պարոն, ճար մ'ըրէ, ճժեր քաղցած են. աղերսեց Կվօն։

—Աման չկայ. բոլորը տարել են, յայտնեց օրիորդը։

—Да на что ему миска? вѣдь они никогда правду не говорятъ, մէջ մտաւ ոստիկանը։

—Ի՞նչ կըսէ, աղջիկ պարոն, հարցրեց Հաջին, գուշակելով որ խօսքը իւր օգտին չէ ասուած։

—Կասէ թէ՝ դու կխաբես։

—Կխաբեմ... ամօթ չէ ընձի որ խաբեմ. ես հաջի մարդ, Երուսաղէմ գացած, Քրիստոսի լուս գերեզմանը պագած, ես կրնամ խաբել. . . վրդովուած բացագանչեց Կվօն և աչքերը սևեռեց ոստիկանի վրայ։

—Խարես, բա՛ս, ты երկու բաժին хочешь взять. պնդեց ոստիկանը։

—Էմմ՛ն, աղա, էրմալ խօսք մ'ըսէր, ամօթ է ընձի. ես հասարակ մուրացիկ չեմ... Նկատեց Հաջին և այնքան վիրաւորուեցաւ, որ կամենում էր դուրս գնալ իսկոյն։ Բայց օրիորդը շտապեց ամոքել նրան.

—Մի՛ նեղանար, ռուս մարդ է, բան չէ հասկանում. սպասիր, գուցէ մի աման գտնեմ… այս ասելով օրիորդն այս ու այն կողմն ընկաւ, սենեակն ու պատուզամը նայեց, բայց չկարողանալով բան գտնել, մօտեցաւ նորից Կվօին և ասաց.

—Վաղն անշուշտ մի աման կճարեմ, գնացէք մի կերպ այսօր կառավարուեցէք։

—Վո՞ղը... լաւ, ասաց Կվօն՝ թագցնելով իւր դժգոհութիւնը։

Բայց որովհետև կինն ու երեխաները «բաժին» էին սպասում, ուստի չկարողացաւ իսկոյն և եթ հեռանալ բակից։ Նա յածեց աչքերն այս ու այն կողմը և յանկարծ պատի տակ տեսնելով մի հին դոյլ, մօտեցաւ և վերցրեց այն։

—Աղջիկ—պարոն. էս վեդրօի մէջ բաժին չածուէք. հարցրեց նա, յուսալիր աչքերով վերակացուհուն նայելով։

—Վեդրօյի մէջ…

Օրիորդը, կարծես, կամենում էր իւր համաձայնութիւնը տալ, բայց ոստիկանը մօտեցաւ և դոյլը խլելով։

—Чудакъ ты! на что тебѣ ведро? հարցրեց բարկացած։

Կվօն ու օրիորդը մի տարակուսական հայեացք ձգեցին միմեանց վրայ, և դեռ խօսք չէին արտասանել, երբ վանեցի խոհարարի ձայնը լսուեցաւ խոհանոցից.

—Սպաս էլ չունինք. ինչ պիտի տանես, Կվօ։

Այս նորութիւնը ազսի յոյսը կտրանեց։ Նա մի խղճալի հայեացք ձգեց օրիորդի վրայ։

—Միթէ բոլորը վերջացաւ, հարցրեց վերակացուհին, և, կարծես, չհաւատալով խոհարարին, դիմեց դէպի խոհանոցը կերակրի պղինձը տեսնելու։

Օրիորդին հետևեցին նաև Կվօն ու ոստիկանը։

Խոհանոց սրահը մի փոքրիկ խցիկ էր, որի մէջ կրակարանի վրայ ամրացրած երկու ահագին կաթսաներից և մի հատ հնամաշ աւելից զատ, ուրիշ ոչինչ չկար։ Այդ կաթսաների մէջ լուր օրերը պատրաստում էին արգանակ, պասից օրերը՝ ընդեղէն, իսկ կիւրակէ օրերը՝ բրինձ ու մաշի մի խառնուրդ, որն անուանում էին «չլավիով»։ Այդ աւուր պատրաստածն էլ «չլավիով» էր, որից, դժբախտաբար, ոչինչ չէր մնացել Կվօի երախաների համար։

Ամենքը միաժամանակ նայեցին պղինձների մէջ և գտին նրանց դատարկ։

Հարցը վերջացաւ։

Խոհարարը գոհ էր, որ իւր խօսքը ճշդուեցաւ։ Ոստիկանը հանգիստ՝ որ նորեկից պիտի ազատուի, բայց օրիորդը դժգոհ՝ որ չյաջողուեց իրեն, գէթ ժամգոտած վերջոյում, մի բաժին հասցնել Հաջիի ճժերին։ Նա վերադարձաւ իսկոյն իւր սենեակն և վերցնելով այնտեղ մնացած վերջին մի հացը բերաւ և տուաւ Կվօին ասելով։

—Այս մի հատն է մնացել տար և կառավարուիր մի կերպ. իսկ աման համար ես վաղը կըյայտնեմ «խնամակալուհիներին». վաղը նրանք պիտի գան։

Կվօն առաւ հացը. առանց, սակայն օրիորդի վրայ նայելու։ Նա, մինչև անգամ, չհետաքրքրուեց բարձրաստիճան «խնամակալուհիների» անունը լսելով. խնամակալուհիների, որոնց վերակացու օրիորդը պիտի զեկուցանէր Կվօի աղջկայ կոտրած ամանի մասին, ներկայացնելով այդ առթիւ заявленіе, отношеніе, объявленіе և այլ նման թղթեր։ Ճշտապահութիւնը, արդարև, օրինակելի էր այստեղ։ Կոտրած խեցին արժէր միայն 8 (ութ) կոպէկ. բայց նրա մասին պիտի զեկուցանուէր ընդունուած եղանակով։ Այսուամենայնիւ, այդ բոլորը անհասկանալի մնացին Հաջի Կվօի համար։ Նա աչքերը յառել էր կրակարանի վրայ եղող ահագին կաթսային և, կարծես, նրա մէջ իւր մի կորուստ էր պտրում։

—Спросите, зачѣмъ онъ стоитъ. դարձաւ ոստիկանը օրիորդին։

—Էլ ինչի՞ ես սպասում, հարցրեց սա Կվօին։

—Աս գիշեր, աղջիկ-պարոն, աղէկ էրազ մ' տեսայ... աս պղնձից դահա ջօջը մըր օջախի վրայ դրած, բալէս փիլաւով լեցուն, դաղէս հիւրերուն կցրուէր... հիմայ ան կը մտածեմ թէ՝ էրէկ իմ ջօջ-պղնձից ուրիշներուն բաժին կըցրուէի, աստ ինքս եկած եմ բաժին մուրալու... վշտահար եղանակով պատասխանեց Կվօն։

Օրիորդը մի քանի խօսքով թարգմանեց ոստիկանին Հաջիի խօսքերը։

—Сумашедшій онъ, что ли? հարցրեց պաշտօնեան ծիծաղելով։

Օրիորդը չպատասխանեց։

Բայց Վանեցի խոհարարը որ «քաղքի» ուրիշ շատ «արմագան խմբերի» հետ միասին մի փոքր էլ ռուսերէնին էր ծանօթացել, դարձաւ մեկցուին։

—Տօ. գիտես ինչ կըսէ աղան։

—Ի՞նչ կըսէ, հետաքրքրուեց ռէսը։

—Կըհարցնէ թէ՝ Հաջի-Կվօն չէ ցնգեր ու աստնկ բաներ կըխօսի։

Կվօն դարձաւ դէպի պաշտօնեան, նայեց նրա վրայ դառնութեամբ և հեգնական ժպիտը բերանին պատասխանեց.

—Ըսէ ուրեն թէ՝ Հաջի-Կվօն ցնդած չեղնէր նէ՝ ուր պապերու երկիր թաղուած կըեղնէր հըմիկ.. հէլէ՛թ ցնդեր է օր ուր ճժեր առեր, մտեր է աս երկիր…։

Այս ասելով Կվօն ձեռքի հացը դրաւ կրակարանի վրայ և դուրս գնաց։

Խե՜ղճ մարդ, ո՞վ արդեօք քո սիրտը կարդաց այդ վայրկեանին, ո՞վ քո վշտերի ծանրութիւնը չափեց…։

Մուրացան։

Ինչ վերաբերում է մայրաքաղաքների օրագրներին, թէպէտ նրանց թիւը աւելացաւ վեցով, սակայն՝ «Մեծաւ մասամբ գրանք անհետացան, միայն «Նարօդ» և «Միրօվիե օտգոլոսկի» օրաթերթերը մնացին, բայց դրանք էլ ոչինչ յաջողութիւն չունեցան. առաջինը բոլորովին բաժանորդ չունի, իսկ երկրորդը զանազան ուղղութիւնների խառնուրդ և այնպիսի տխուր զանգուածք է ներկայացնում, որ չուտափոյթ մահուան դատավճիռը անխուսափելի է։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՐԱՊԻԶՈՆ, 1 յունվ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Կուզեմ հաղորդել ձեզ տեղեկութիւններ երկրիս դրամական կացութեան մասին։

Օգնութիւնները դադրած են, ժողովուրդը ընդհանուր կերպով աղքատ է, բայց և այնպէս մտատանջութիւն պատճառելու աստիճանի ընտանիքներ չեն երևնար. ամեն մարդ իրեն չափովը գործի մը սկսած է այստեղ կամ հետամուտ է սկսելու։ Նոյնը կըլսենք նաև Կարնոյ կողմերու համար ալ։ Ապահովութիւնը լաւ է և թէրքաց վերաբերմունքը դէպի հայեր խիստ քաղաքավարի. . . Տեղւոյս ազգ. առաջնորդարանի ժողովներն ալ կազմած են և կանոնաւոր կերպով կըհետևեն իրենց գործին։

Տրապիզոն ունի վարչութեան թոյլտուութեամբ կազմած հայուհեաց ընկերութիւն մը, որու նըպատակն է աղքատիկ տղայոց հագուստ, կօշիկ և դպրոցական պիտոյք մատակարարել։ Երկու տարիէ հետէ կազմալուծեալ վիճակի մէջ էր, բայց այս տարի վերակազմուեցաւ և իւր սուղ միջոցներով յիսուն տղու պէտքերը հոգաց։ Սոյն ընկերութեան օգտին Թիֆլիզի տիկնանց մէջ ալ եթէ փոքրիկ հանգանակութիւն մ'ըլլար, մեծ ուրախութիւն կըպատճառէր Տրապիզոնցոց, որովհետև հասոյթնին խիստ քիչ է. ի հարկէ այստեղէն ընկերութեան տոմսեր կարելի է ուղարկել ի սպառումն, որչափ որ պահանջուի, և դրամը կ'ուղարկուի առաջնորդարան՝ ընկերութեան գիւանին յանձնելու համար։

Ն.

—

«Բիւզանդիոնի» խմբագրութիւնը ներկայացրել է Կ. Պոլսոյ ամեն. Օրմանեան Պատրիարքին 1500 ղրուշ դրամ (մօտ 120 ռուբլի), խնդրելով այդ գումարը հաւասար մասերով գործ դնել 1) Խաս գիւղի կարօտելոց «ձմեռնային անմիջական պէտքերուն համար». 2) «խեղճ և անօք գաղթականներուն համար» որոնք Վանայից և այլ տեղերից Պօլիս են վերադառնում և 3) «Ազգ. հիւանդանոցի բազմակարօտ որբանոցին»։

—

Կ. Պոլսոյ լրագիրներից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները.

—ԵՐԶՆԿԱՅԷ կ'գրեն մեզ թէ տեղւոյն Եզնիկեան ուսումնարան, իր ընթացքն 5 տարի յաջողապէս անընդհատ շարունակել է վերջ, այս օրեր փակուելու վրայ էր, բայց տեղւոյն առաջն. Տեղապահ Տ. Դանիէլ, Տ. Վ. Յակոբեան՝ գումարելով Թաղ. Ժողովոյ և Ս. Նշան եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ անդամներն և ուրիշ ձեռնհաս անձնաւորութիւններ, յաջողեր է կազմել Հոգաբարձութիւն մը, և ձեռնարկեր է պաշտպաններ գտնել դպրոցի չքաւոր աշակերտաց, տարեկան, 2 ոսկի թոշակով։ Դանիէլ Վ. ինքն երկու սանի պաշտպան գրուեր է, այդպէս գթասիրութեան օրինակ տալով ուրիշներուն։ Նորակազմ Հոգաբարձութիւնը պաշտօնի ձեռնարկելով, Թաղային վարժարանը միացուցեր է Եզնիկեան ուսումնարանին հետ, որով աշակերտաց ընդհ. գումարն եղեր է 240, որոց 160ը թոշակաւոր, 220 ոսկի տարեթոշակաւ, և 60-ը ձրի։ Սեպտ. 18-ին բացուեր է վարժարանն որ կանոնաւորապէս կ'շարունակուի։ Բայց որովհետև դըպրոցը ներկայ պայմանաց մէջ ամսական 5 ոսկիէն աւելի բաց մ'ունի, զոր, տնտեսական տագնապին հետևանօք, կարող չէ գոցել Երզնկացին, ուստի հոգաբարձութիւնը կոչում կ'ընէ բարեսէր ազգայնոց գթասիրութեան, որպէս զի պաշտպան գրուին մէկ մէկ աշակերտի տարեկան 2 ոսկի թոշակաւ։

Անգլիայէ Օր. Ճորճիանա Փրանսիս Փաք, որ խոստացած էր հանգանակութեամբ 60 անգլ. ոսկիի գումար մը հասցնել ի նպաստ անօք տղայոց և կարօտելոց, այս անգամ Մանչեսդրի հայ գաղթականութեան հովիւ Զուլալեանի Տ. Թէոդորոս քահանայի միջոցաւ յղած է ի Պատրիարքարան 30 անգլ. ոսկի։ Ս. Պատրիարքն այս առթիւ յիշեալ օրիորդի հասցէին օրհնութեան կոնդակ մը յղեց երէկ։

ԽԱՐԲԵՐԴԷ կ'գրեն որ կարգադրութեամբ մը, ձմրան մէջ տրամադրուած նպաստի գումար մը այս անգամ անգլ. հիւպատոսի ձեռքով պիտի բաշխուի ծանօթ աղքատ գիւղացիներուն։ Հիւպատոսին պիտի աջակցի 8—9 հոգի է բաղկացած յանձնաժողով մը տեղացի Հայերէ ու Հայ-Բողոքականներէ անուած։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

«Temps» լրագրի աշխատակից պ. Մարսել Մօնիէն ներկայումս ճանապարհորդում է Անդրկասպեան երկրում. վերջին երեք տարին նա գիտնական նպատակով ճանապարհորդել է Չինաստանում, Կորէյում, Մոնղոլիայում և Միջին Ասիայում։ Պ. Մօնիէն Անդրկասպեան երկրից գալու է Կովկաս և հայրենիք կվերադառնայ անցնելով Մոսկվան և Պետերբուրգ։

—

Ռուս բնագէտների և բժիշկների համագումար X-դ ժողովը տեղի կունենայ Կիեվում և կըբացուի այս տարուայ օգոստ 21-ին։ Ժողովը կըտևի մինչև օգոստ. 30-ը։ Այն անձինք, որոնք կամենում են մասնակցել ժողովին, պէտք է իրանց ցանկութեան մասին յայտնեն մինչև 1898 թուի մայիսի 20-ը, իսկ գիտնական զեկուցումները ընդունվում են մինչև օգոստոսի 1-ը։

—

Օդեսայից հեռագրում են մայրաքաղաքի լրագիրներին, որ հռչակաւոր նկարիչ Յովհաննէս Այվազովսկին այս օրերը վերջացրել է մի մեծ պատկերը «Նապօլէօնը Սբ. Հեղինէ կղզու վրայ։

—

Այժմ Պետերբուրգում, ինչպէս հաղորդում է «Արաքս», համեմատաբար մեծ թուով նկարչութիւն են ուսանում թէ հայ երիտասարդներ և թէ հայ օրիորդներ։ Կայսերական գեղարուեստի ճեմարանի նկարչական բաժնում ուսանում են՝ պ. Զուրաբեան (Հաշտարխանցի), Խ. Տէր-Մինասեան (Հինախիջևանցի), Դ. Օքրոյեան (Թիֆլիզեցի) և պ. Կարապետեան. ճարտարապետական բաժնում՝ Տ. Սարգսեան (Թիֆլիզեցի)։

Միջնակարգ դպրոցներում ուսանում են՝ իշխանուհի օր. Ե. Բէհբութեան (Թիֆլիզեցի), օր. Վ. Ձմշկեան (Թիֆլիզեցի), Ա. Միրզոյեան (Գանձակեցի), Վ. Ախիկեան, Պ. Թարխանեան և Լ. Մրավեան։ Պ. Դիմիտրի—Կավկազսկի նկարչական մասնաւոր արուեստանոցում պարապում է օր. Մ. Սարգսեանց (Հաշտարխանցի)։

Օր. Մարիամ Խանթարճեանը այս տարի յաջողութեամբ աւարտեց իւր ուսման ընթացքը Պետերբուրգի նկարչական ուսումնարանում։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՍԱԼՄԱՍՏ, 17-ն դեկտ. 1897.

(Թղթակցութիւն «Արձագանքի»).

—

Ոչ մի զօրութիւն չի կարող զսպել խելամ ժողովրդի այն զայրոյթը, երբ նա կատարվում է, Մահմեդի հաւատարիմ ճետերի, մոլլաների և սէյիդների զըրգմամբ. նա արդէն այդ առեն կատաղած է լինում. ինչ որ հրամայում է նրա պաշտելի կրօնապետ, մոլլան, նա կատարում է իբր սրբազան պարտիք։ Ահա այդ զայրոյթներից մէկը, որ անցեալներ կատարու Ատրպատականի Ուրմի քաղաքում, աւելի հետևեալն է։

Նոյեմբերի 10-ին, Կեօք-Թէփէ սարբական գիւղն են գնում երեք պարսիկ սրիկաներ, որը լաւ մ'արբեցէն վերջ, ուզում են բռնաբարել իրանց հանդիպող սարրի կնոջ։ Սրա վրայ սարրիներ հաւաքվում և լաւ մը ծեծում են պարսիկներին, որոնցից մէկին յաջողվում է փախչել, իսկ երկուքը ձերբակալվում են սարրիներից։ Առաւօտ, պարսիկներին բերելով, կառավարութեան են յանձնում, որից քիչ յետոյ փախչող պարսիկի անչունչ դիակը Ուրմի քաղաքի մօտեր գտնվում է. Սրա վրայ պարսիկ մոռլանդ ժողովուրդ սատկիկ յուզուած, բազմութեամբ յարձակվում են Կեօք-Թէփէ գիւղի վրայ և ռ-գում են գիւղը ցրուել, կառավարութիւն փորձում է դէմը առնել, բայց չի կարողանում։ Խուժանի ձեռք են ընկնում 3—4 սարրիներ, որք սարսափելի տանջանքներով քաղաք են բերվում։ Ժողովրդեան պահանջման վրայ, կառավարութիւն նոյեմբերի 15 չաբաթ օր, գլխատեց հրապարակաւ Դաւուս անուն սարրուն։ Սրարբիներ, և առ հասարակ բոլոր քրիստոնեայ ազգաբնակութիւնք յուզուած են, որովհետև մինչև այս դէպք—քրիստոնէի գլուխ չէր կտրած Պարսկաստանում։

Չին ամեն տեղ ծածկեց սպիտակ և սառն սաւանով, բայց քիւրդը չի դադրում իւր գազանութիւններից. քանի օր առաջ Սալմաստի Մահլամ հայաբնակ Աղբակեցի գաղթականներից քանիս հաւաքուելով, գնում են մերձակայ Կառնիեարուղ լեռ, իրանց համար վառելիք բերելու։ Սրանք 3. 4 բաժանուելով սկսում են իրանց գործ, երբ 6—7 զինուած քրդեր գալիս են և սկսում են սարսափելի կերպով ծեծել խեղճ հայերին, որոնց հազիւ յաջողվում է փախչել մահամերձ վիճակով։ Դրանցից մէկը մեռաւ անցեալ օրը, իսկ երկուք մահամերձ հիւանդ են։ Ահա այս է խեղճ ողորմելի գաղթական հայի վիճակ. .

Արմէնիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱԿԵԴՈՆԻԱ. — Մակեդոնիական կեդրոնական կոմիտեը, որ Սոֆիայումն է, ուղարկել է պետութեանց ներկայացուցիչներին ֆրանսերէն և բուլղարերէն լեզուով մի յատագիծ, որ կըում է սոյն վերնագիրը «բարենորոգութեանց ծրագիր, որ անհրաժեշտ է մըտցնել Մակեդոնիայում, քրիստոնէական շարժումը հանդարտեցնելու համար»։ Այս ծրագրում գլխաւորապէս շեշտուած է այն կէտի վըրայ, որ հարկաւոր է Մոնաստիրի Ուսկուբի և Սալոնիկի նահանգներից կազմել մի ինքնավարական Մակեդոնիական երկիր, որ թէև ենթարկուի Թուրքաց պետութեան, սակայն ունենայ ընդհանուր նահանգապետ և ընտրուի ազգաբնակութիւնից։ Այդ ինքնավարական երկրում մտցնուի ազատ ազգային ժողով, ընտրելու իրաւունք, սեփհական բիւջէ, սեփհական միլիցիայ, տպագրութեան ազատութիւն և անկախութիւն դպրոցական գործի։

Հետաքրքիրը այն է, որ կոմիտեը դէմ է Մակեդոնեան Բալկանեան կայսրութեան կամ թագաւորութեան ո և է մէկի հետ միացնելու մաքին և պնդում է որ նա պիտի միացած մնայ Թիւրքական պետութեան։

—

ԻՏԱԼԻԱ. —Սիկիլիայում անկարգութիւններ են տեղի ունենում։ Գիւղացիների մէջ կատարելապէս սով է ընկել։ Իտալական թերթերը հաղորդում են որ 500 մարդ արդէն Հռոմից անցան Նէապօլ, որտեղից Բրազիլիա են գնալու։ Խօսվում է նաև ուրիշ գաղթականութիւնների մասին։ Դրա պատճառը սոսկալի սովն է։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Յունվարի 7-ից

ԿԱՆՏՕՆ. —Կանտօնի մի գիւղի մօտ Բեռլինի դեսպանատան միսիօնէր Հօմէերը թալանուեց և վիրաւորուեց։ Այստեղի գերմանական հիւպատոսի յայտարարութեան համաձայն, նահանգապետը իսկոյն միջոցներ ձեռք առաւ՝ բաւականութիւն տալու համար։

ՆԱՆՏ. - Կէսօրից յետոյ այստեղ հակահրէական ցոյցեր եղան։ Ոստիկանութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել։

ՓԱՐԻԶ. —Սոցիալիստ պատգամաւորները մի ազդարարութիւն հրատարակեցին, որով հրաւիրում են երկրին՝ չհաւատալ նրանց, որոնք հակահրէական պատրուակի տակ սկսում են ճնշել մի բուրժուազական դասակարգը յօգուտ միւսի։ Ազգը մատնանիշ է անում նաև պատերազմական վտանգի մասին։

ՄԱՐՍԷՅԼ. — Առաւօտեան մի քանի ուսանողներ և այլ անձեր ցոյց արին գոռալով «Կեցցէ Զօլայի վըրայ, ի բաց հրէաներին !» ոստիկանութիւնը ցրուեց խռովարարներին և երկուսին էլ ձերբակալեց։ Երեկոյեան մի նոր ցոյց եղաւ հրէաների պատկանող մագազինների հանդէպ, որոնք արդէն փակուած էին։ Ցոյց անողներին ցրուեց ոստիկանութիւնը Մօտ 20 հոգի ձերբակալուեցին։

ՓԱՐԻԶ. —Երեկոյեան տեղի ունեցան հակահրէական անկարգութիւններ, բայց առանց լուրջ միջադէպքերի։ Նանտում կոտրել են հրէաների մագազինների ապակիները։ Տեղի են ունեցել մի քանի ձերբակալութիւններ։

ԼԻՈՆ. —Ուսանողները ցոյց արին հրէական սինագօգայի հանդէպ։ Հրէական մագազինները փակուեցին։ Ցոյց անողներին մի քանի անգամ ցրուեցին, սակայն ամեն անգամ նրանք նորից հաւաքվում էին։ Փայտերի փոխադարձ հարուածներ տեղի ունեցան։ Մի ձիաւոր պահակ վիրաւորուած է։ Մօտ 20 անձ ձերբակալուեց։ Ցոյցերը շարունակվում են։

Յունվարի 8-ից։

ՓԱՐԻԶ. Մի քանի աննշան ցոյցեր տեղի են ունեցել Մարսէյլում։ Փարիզում ուսանողների երկու խմբերի, որոնք գնում էին դէպի նոր կլուբը, ցրուեցին առանց միջադէպքի։ Հակահրէական ցոյցեր տեղի ունեցան Տուլուզում, Նանտում, Բուանում։

ԱԼԺԻՐ. – Բարձրագոյն դպրոցի ուսանողները, հնչեցնելով սովորական աղաղակը, երեկոյան ժողով կազմեցին, որ վերջացաւ կռւով։ Նրանք կամենում էին վառել Զօլայի պատկերը, ոստիկանութիւնը փորձեց միջամտել, տեղի ունեցաւ ընդհարումն, որի ժամանակ մի քանիսը թեթևակի վիրաւորուեցին. ձերբակալուած են 5 հոգի։ Մի նոր կռիւ ևս ծագեցրին ուսանողները, ճգնելով ազատել իրանց ընկերներին։

ՓԱՐԻԶ. – Երեկոյեան հանդարտ է քաղաքը։

ՏՈՒԼՈՒԶ. —Երեկոյեան ուսանողները հակահրէական ցոյցեր արին, ոչ մի դէպք տեղի չունեցաւ։

ԼԻԼ. – Տեղի ունեցան աննշան ցոյցեր։

Յունվարի 9-ից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր Սիբիր է ուղևորվում ճանապ. հաղորդակցութեան նախարարը տեղն ու տեղը անյապաղ վճռելու համար հեռաւոր սիբիրական մեծ ճանապարհի կառուցման անյետաձգելի հարցեր։

ՓԱՐԻԶ. Էմիլ Զօլան կենթարկուի երդուեալների դատարանին։

ԿԱՆՆ. Գլադստոնի առողջութեան դրութիւնը անհանգստութիւն է պատճառում շրջապատողներին։ Թուլութիւնը շատ մեծ է։

ԼՈՆԴՈՆ. Գանձարանի կանցլերը Բրիստոլում արտասանած ճառի մէջ յայտնեց, որ անգլօ-չինական բանակցութիւնները փոխառութեան մասին՝ առաջ են գնում. բայց եթէ անյաջող իսկ լինի, Անգլիան պէտք է ամեն կերպ յայտնի Չինաստանին իւր բարեկամական զգացմունքները։

Չէմբըրլէնը Լիվըրպուլում խօսելով Կրետէի մասին, յայտնեց որ կղզու դրութիւնը անտանելի է։

ԲԵՐԼԻՆ. – «Tageblatt»-ը ասում է. «Գերմանիան արևելքում ամենից քիչ շահ ունեցող պետութիւնն է։ Եթէ, դրանով հանդերձ մի քանի լրագիրներ հնարաւոր են համարում հաղորդել Գերմանիայի բողոքը Թագաւորազն Գէորգի Կրետէի նահանգապետութեան առթիւ, դա համապատասխան չէ եղած փաստերին։ Գերմանական քաղաքականութեան ուղեցոյց աստղը Թիւրքական արևելքում կըլինի մնալ բարեկամական յարաբերութեան մէջ Ռուսիոյ հետ։

ԲՈՄԲԷՅ. — Մահուան դէպքեր ժանտախտից անցեալ շաբաթ 651 էր. գաղթականութիւնը շարունակվում է. առևտուրը դադարել է։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ — 11 — 12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռական հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԹՈՒԴԵՆԿՕ—10½—11½ ժ. կանանց և երեխայոց։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—11½—12 ժ. կանանց հ.

Ի. Փ. ԳՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի. քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ.—1½—2½ ժ. ներքին և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին երեխայոց հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—6½։

Ա. Ն. ՃԳԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խուշրացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի եայլն։

Վճար 50 կ. Հքատորները ծրի։ Համախորհրդը (կօնսիլիումը) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

—

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՈՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ

(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐԳՆԶՆԿԱՑԻ)

Սօլօլակ, Գանովսկայա փողոց № 3,

Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 միզային օրգանների վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Ս. Ա. ՃԱՆՏԱՎՍԿԻ, ժամը 1—2 վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ օրեր)։

Կին-բժիշկ Կ. Ե. ԿԱՐԳՈՎԻՉ, 12—1 մանկաբարձական և կանանց հիւանդութեանց, (երեքշ. հինգշ. և շաբաթ օրերը)։

Գ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն։

Ս. Լ. ԲԵՆԿԼԵՎՍԿԻՅ 12—1. ականջի, քթի, կոկորդի և վիրաբուժական հիւանդութեանց։

Ս. Բ ԳՐԵՑԻՆԳԵՐ 12½—1½, մասսաժ և բժշկական մարմնամարզութիւն, բժիշկների արտշմամբ (երկուշ. չորեք. ուրբաթ) վճար փոխադարձ համաձայնութեամբ։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց

Գ. Ա. ՔՈՉԱՐԵԱՆՑ ժամը 11—12, կաշուի, վեներական, սիֆիլիսի և մեզային օրգանների հիւանդութեանց երեքշ. հինգշ. և շաբաթ).

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը, 1—2 ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (երեքշ. չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ատամնաբոյժ Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 11—12, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԷՆՑ, գեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի եայլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը **50 կ.**

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, ելեքտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ

(Տասներորդ տարի)

Գինը փոխանակ 60-ի 50 կոպէկ։

Դիմել՝ հրատարակիչ

Գիւտ ա. ք. Աղանեանցին։

—

ԲԺՇԿԱՊԵՏ

Ե. Ի. ՓՐԱՆՑԻՈՒՍ

մասնագէտ կոկորդի, քթի և ականջների հիւանդութեանց

Ընդունում է հիւանդներին երեկոյեան 5—7 ժամը։

Վելեամինովսկայա փող., տուն № 4, քաղաքային դումայի հանդէպ։

(30—12)

Bateaux a vapeur Français „N. PAQUET et Cie“

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ եւ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կըլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 25/6-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 21/2 փետրվ. ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը նաւապետն է ԳԱՐՐԻԳ

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաբերեժնայա։

Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։

Բաքւում.—Պ. Ս. Դիլդարեանին, Կոլիւբակինի հրապարակ։

Նովօրօսիյսկում.—պ. Մելքիոր Հարչինրողերին։ (20 —11)

ОБЩЕСТУДЕНЧЕСКІЙ ОБѢДЪ.

12 января, въ 3 часа дня, состоится въ „Тифлисскомъ собраніи“ обычный ежегодный обѣдъ студентовъ какъ университетовъ, такъ и другихъ высшихъ учебныхъ заведеній. Желающіе подписаться на этотъ обѣдъ могутъ получать билеты (по 4 руб. 25 коп., со всѣми расходами) у гг. распорядителей: *С. І. Ананова* (Головинскій просп., свой домъ), *М. Д. Ельчукова* (классическая гимназія или Кирпичная улица. домъ № 8), *Н. В. Струве* (Коргановская улица, д. № 8), *Ю. Н. Милютина* (Гудовича улица, домъ № 2), *А. С. Френкеля* (Грибоѣдовская улица, домъ № 33), *С. Б. Халатова* (Лабораторная ул., свой домъ), *Л. І. Шевалье* (Коджорская ул. д. № 1), *Л. Б. Хиддекеля* (книжный магазинъ), въ *„Тифлисскомъ собраніи“*. *„Тифлисскомъ кружкѣ“*, *„Артистическомъ обществѣ“* и въ редакціи *„Новаго Обозрѣнія“*. (1—1)

Дозволено цензурою Тифлисъ, 10-го Января 1897 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի։ Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.